



USAID
ԱՄԵՐԻԿԱՅԻ ԺՈՂՈՎՐԴԻՑ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ
ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՀԶՈՐԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

ՄԱՔԱՌԵԼՈՒՑ ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի սոցիալական ծառայությունների
գնահատման ուղեցույց

ԵՐԵՎԱՆ, 2008

Սույն ձեռնարկը հնարավոր է դարձել Ամերիկայի ժողովրդի աջակցության շնորհիվ՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄԶԳ) միջոցով: Սույն ձեռնարկում արտահայտված տեսակետները պատկանում են հեղինակներին և հնարավոր է, որ չհամընկնեն ԱՄՆ ՄԶԳ կամ ԱՄՆ կառավարության տեսակետների հետ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն	2
2008թ. պիլոտային համայնքների ընտրությունը և մոդելի փորձարկումը	4
Համայնքի սոցիալական ծառայությունների գնահատման աշխատանքների նախապատրաստում	5
Ի՞նչ է համայնքի սոցիալական ծառայությունների գնահատումը	5
Ինչու՞ համայնքները պետք է կատարեն համայնքում սոցիալական ծառայությունների գնահատում	6
Ձեր սոցիալական ծառայությունների գնահատման ուղեցույցի օգտագործումը	7
Հայաստանի սոցիալական ծառայությունների գնահատման ծրագիր՝ Մաքառելուց բարեկեցություն. Ծրագրի ընթացքի գծապատկեր	8
Տեղական համայնքների ներգրավում	10
Հոլ նախապատրաստել հաջողության համար	10
Հայտ ներկայացնելու հրավեր տեղական համայնքներին	10
Հայտերի գնահատում	12
Մրցույթի մասնակիցների հանդիպում և առաջին դաս	16
Թիմի ղեկավար կորիզի հանդիպում-սեմինար	17
Վարողին/դասավանդողին անհրաժեշտ պարագաներ	17
Գլխավոր շահագրգիռ կողմերի ներգրավում (ներկայացում)	18
Տրամադրվող նյութեր	18
Համայնքի սոցիալական ծառայությունների գնահատման առաջին հանդիպում	19
Շահագրգիռ կողմերի հետ առաջին հանդիպման ծրագրումը	19
Հանդիպման համար վարողին/դասավանդողին անհրաժեշտ պարագաներ	20
Նախնական պարապմունք համայնքի թիմի ղեկավար կորիզի համար	21
Լրիվ պարապմունք, գլխավոր շահագրգիռ կողմերի գնահատման առաջին հանդիպման նյութերը	21
Գնահատման առաջին պարապմունքի ներկայացումը	21
Առաջին գնահատման ժամանակ ներկայացնողին անհրաժեշտ նյութեր	22
Համայնքային երկրորդ գնահատում	24
Ավարտելով համայնքի սոցիալական ծառայությունների գնահատումը	24
Վարողին/դասավանդողին անհրաժեշտ պարագաներ	25
Երկրորդ հանդիպման ներկայացում՝ համայնքի կարիքների գնահատում II	26
Երկրորդ հանդիպման համար օժանդակ նյութեր	26
Գործընկերության զարգացում, 4-րդ հանդիպում	29
Վարողին/դասավանդողին անհրաժեշտ պարագաներ	29
Գործընկերություն և տրամաբանության մոդել	30
Չորրորդ հանդիպման համար նախատեսված նյութեր	31
Ծրագրի վերահսկողական մեխանիզմներ	31

Ներածություն

Այս ուղեցույցը մշակվել է ԱՄՆ ՄՁԳ Հայաստան, Սոցիալական պաշտպանության համակարգերի հզորացման (ՍՊՀՀ) ծրագրի շրջանակներում: ՍՊՀՀ-ն մեկնարկել է 2007թ. բարելավելու Հայաստանի քաղաքացիների կյանքը և օգնելու ստեղծել ավելի մատչելի ու արդար սոցիալական պաշտպանության համակարգ: Ծրագրի չորս բաղադրիչներն աջակցում են սոցիալական ապահովագրության համակարգի կատարելագործմանը, նպաստում են աշխատաշուկայի բարեփոխումներին, խթանում են աշխատավայրում անվտանգության միջազգային ստանդարտների կիրառումը և բնակչության խոցելի խմբերին, ներառյալ՝ տարեցներին և հաշմանդամություն ունեցող անձանց, հնարավորություն են տալիս դառնալ ավելի ինքնավստահ:

Գործընկերության միջոցով ջանքերի մեկտեղման հասնելը ՍՊՀՀ ծրագրի գլխավոր ռազմավարությունն է: Առավելագույն արդյունք ապահովելու համար ՍՊՀՀ-ն համագործակցում է տարբեր գործընկերների հետ, այդ թվում՝ Հայաստանի կառավարության, միջազգային դոնոր կազմակերպությունների, ինչպես նաև տեղական և միջազգային հասարակական կազմակերպությունների:

Համայնքային սոցիալական ծառայությունների գնահատման նախաձեռնության նպատակը համայնքի սոցիալական կարիքների գնահատման, պլանավորման և սոցիալական ծառայությունները ոչ կառավարական կազմակերպությունների միջոցով մատուցելու առաջավոր փորձի ցուցադրումն է:

Այդ նախաձեռնության խնդիրներն էին՝

- Մշակել օգտակար գործիքներ, որոնք կկիրառվեն համայնքի սոցիալական կարիքների գնահատման, պլանավորման և ծառայությունների մատուցման համար արտաքին օգնություն ներգրավելուն ուղղված աշխատանքներում, համայնքային աշխատանքային խումբ ընտրելու և ուսուցում տրամադրելու միջոցով:
- Համաֆինանսավորվող դրամաշնորհների միջոցով օժանդակել տեղական իշխանությունների նախաձեռնությունը, այն է՝ պատվիրակել նվազ ծախսատար, կայուն համայնքային սոցիալական ծառայություններ ոչ կառավարական կազմակերպություններին:

Հայաստանի սոցիալական ծառայությունների գնահատման ծրագիրը նախատեսված է օգնելու համայնքներին տրամադրել սոցիալական ծառայություններ իրենց խոցելի անդամներին և խթանել սոցիալական ու տնտեսական ներառվածությունը: Հետևաբար Հայաստանի սոցիալական ծառայությունների գնահատման «Մաքառելուց՝ բարեկեցության» ծրագրի նպատակն է՝

- Խթանել բնակիչների, համայնքային խորհուրդների, տեղական իշխանությունների, գործարարների, ՀԿ-ների և դոնորների միջև առավելագույն համագործակցություն և փոխզիջում:
- Հզորացնել համայնքները գերակայությունները սահմանելու և ռեսուրսները կառավարելու համար:
- Ապահովել, որ ցանկալի ծառայությունները բավարարեն համայնքի կարիքները:
- Կատարելագործել և ապակենտրոնացնել սոցիալական ծառայությունների մատուցումը, խթանելով սակավ ռեսուրսների արդյունավետ օգտագործումը՝ օգնելու դրանց կարիքն ամենաշատն ունեցողներին:

- Աջակցել կառավարությանը և ՀԿ-ներին սոցիալական պայմանագրերի միջոցով համագործակցաբար համայնքահեն սոցիալական ծառայություններ տրամադրելու գործուն:
- Սահմանել վերահսկողական մեխանիզմներ՝ գնահատելու արդյունքները, ապահովելու միջազգային նորմերի ու առաջավոր փորձի կիրառումը և ֆինանսական հաշվետվողականություն:

2008թ. պիլոտային համայնքների ընտրությունը և մոդելի փորձարկումը

2008թ. ՍՊՀՀ-ն փորձարկեց մոդելը, որը նպատակաուղղված է համայնքահեն սոցիալական ծառայությունների մատուցմանը՝ համայնքի մակարդակում որոշումների կայացման և փոխզիջման շրջանակներում: Պիլոտային ծրագրում օգտագործվեց տեղի բնակիչների, համայնքային խորհուրդների, տեղական իշխանությունների, գործարարների և հասարակական կազմակերպությունների մոբիլիզացման գործընթացը՝ բացահայտելու տվյալ համայնքի սոցիալական ծառայությունների ռեսուրսները, ուժեղ կողմերը, հնարավորությունները, թույլ կողմերը, կարիքները և եղած տեղական միջոցները՝ բավարարելու կարիքները, և համապատասխանաբար հզորացնելու համայնքի սոցիալական ծառայություններ մատուցելու կարողությունները դրանք հասարակական կազմակերպություններին պատվիրակելու միջոցով:

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից հինգ տարածքներում ընտրվեց եռեսուն համայնք, որոնք հրավիրվեցին մասնակցելու փորձնական ծրագրին: Համայնքներն ընտրվել էին հետևյալ չափանշանների հիման վրա՝ 1) գլխավոր շահագրգիռ կողմերի լայն ներկայացուցչություն ապահովելու կարողություն, 2) տեղական միջոցների և բնափրային ներդրումների հաշվին ՍՊՀՀ աջակցությունը համաֆինանսավորելու ունակություն և 3) իրականացման համար համապատասխան հասարակական կազմակերպությունների առկայություն: Այդ բոլոր երեք չափանիշները կայունության գլխավոր բաղադրիչներն են:

2008թ. գործընթացը /մոդելը փորձարկվեց պիլոտային համայնքներում՝ Ալավերդի, Արթիկ, Նոր Նորք և Նուբարաշեն:

Ստեղծման կայուն լինելն ապացուցվեց շնորհիվ համայնքների մոբիլիզացման և համագործակցային ներգրավման: Իշխանությունների կողմից նախաձեռնված մի շարք համայնքային հանդիպում-դասընթացների միջոցով փորձնական համայնքերը բացահայտեցին իրենց ուրույն գերակայությունները և համապատասխանաբար ձևակերպեցին սոցիալական ծառայությունների մատուցման ծրագրերը, որոնց իրականացումը պատվիրակվեց համապատասխան հնարավորություններ ունեցող ՀԿ-ներին:

Գործընթացը նախագծվեց ու իրականացվեց տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչների հետ համատեղ և կարողությունների հզորացման նախաձեռնություն հանդիսացավ նաև համայնքի ղեկավարների համար: Համայնքներն իրենց ներդրումն ունեցան պատվիրակված ծրագրերում՝ պատասխանատվություն ստանձնելով ֆինանսավորելու նաև ապագա ծրագրերը: Պիլոտային ծրագրի առավել աչքի ընկնող արդյունքներից մեկը տեղական իշխանությունների և ՀԿ-ների միջև գործընկերության հաստատումն է: Այն նպաստեց նաև պատվիրակված ծրագրերը վերահսկելու գործում տեղական իշխանությունների կարողությունների մեծացմանը: Տեղական մարմինների համար հաջորդ քայլը ծառայությունների մատուցումն անընդհատ ֆինանսավորելու համար եղանակներ փնտրելն է: Քանի որ ընտրված ծառայություններն առանձնացվել են մեծ թվով գլխավոր շահագրգիռ կողմերի լայն մասնակցությամբ, կա դրանք ֆինանսական միջոցներով ապահովելու քաղաքական խթան:

Հետևյալը գնահատման գործընթացում մշակված համայնքահեն պիլոտային սոցիալական ծառայությունների օրինակներ են՝

Ալավերդիում, որտեղ ապրում են 2,500 տարեց կենսաթոշակառու, 958 հաշմանդամություն ունեցող կենսաթոշակառու, 203 ծնողազուրկ երեխա և պատերազմի 25 հաշմանդամություն ունեցող վետերան- թոշակառու, հիմնադրվելու է համայնքային կենտրոն սոցիալապես խոցելի և աղքատացած այդ բնակիչներին տարբեր հարցերում խորհրդատվություն տրամադրելու համար, նպաստելով և/կամ արագացնելով նրանց ինտեգրմանը հասարակության մեջ:

Նուբարաշենում, որտեղ համայնքի միակ մանկապարտեզը կարող է ընդունել մանկապարտեզի տարիքի 200 երեխաներից միայն 160-ին, հիմնադրվելու է համայնքային կենտրոն մի շարք ծառայություններ մատուցելու նպատակով: Ի լրումն դպրոցից զրկված երեխաներին տարրական գիտելիքներ տալուն, կենտրոնն անապաստան դեռահասներին և երիտասարդներին տրամադրելու է մասնագիտական ուսուցում և օգնելու աշխատանք ձեռք բերելու հարցում:

Երևանի մեծ **Նոր Նորք** համայնքում, որտեղ բնակվում են 23,000-ից ավելի կենսաթոշակառու (ներառյալ 729 միայնակ տարեց, 7,227 հաշմանդամություն ունեցող անձ և 273 պատերազմի հաշմանդամություն ունեցող վետերան), կհիմնադրվի համայնքային կենտրոն բնակչության այդ խոցելի խմբերին տրամադրվող սոցիալական ծառայությունները բարելավելու նպատակով:

Արթիկում, Շիրակի մարզի երկրորդ ամենամեծ քաղաքը, որտեղ ապրում են 3,350 կենսաթոշակառու (1,250 գրանցված են, որպես տարբեր տեսակի հաշմանդամություն ունեցող), համայնքային կենտրոնը սոցիալական ծառայություններ կմատուցի հաշմանդամություն ունեցող մարդկանց, ինչպես նաև տարեց բնակիչներին:

Հետևաբար մոդելն իրեն արդարացրեց, քանի որ յուրաքանչյուր փորձնական համայնք հաջողությամբ մշակեց գործողությունների ծրագիր, որը հիմնված էր իր իսկ կատարած գնահատման վրա: Յուրաքանչյուր համայնք հաջողությամբ ընտրեց գործընկեր ՀԿ-ներ և ավարտին հասցրեց դրամաշնորհի առաջարկի գործընթացը: Մինչև 2008թ. աշուն յուրաքանչյուր պիլոտային համայնք նոր ծառայություններ առաջարկեց իրենց համայնքում ամենախոցելի խմբերին և այդ աշխատանքները կշարունակի 2009թ. ընթացքում:

Համայնքների զարգացման միջազգային մասնագետ Բարբարա Անդրեոզին 2008թ. ընտրված համայնքներում պիլոտային ծրագրի իրականացման ուղղությամբ աշխատում էր ՍՊՀՀ դրամաշնորհների մասնագետ Քրիստինե Գրիգորյանի հետ: Այդ աշխատանքի արդյունքում մշակվեց հատուկ Հայաստանի համար մոդել: Քրիստինե Գրիգորյանի մշտական մասնակցությունն ապահովեց անհրաժեշտ մշակութային ներդրումը՝ նախագծելու մի գործընթաց, որը հաջողությամբ կիրականացվի Հայաստանում: Քրիստինեն համակարգում էր բոլոր դիմումները, համայնքների հետ նամակագրությունը, և խորհրդատուին օգնում էր բոլոր դասընթացների ժամանակ: Այս ուղեցույցը հանդիսանում է խորհրդատու Բարբարա Անդրեոզիի, ՍՊՀՀ աշխատակից Քրիստինե Գրիգորյանի և Ալավերդի, Արթիկ, Նուբարաշեն ու Նոր Նորք պիլոտային համայնքների միացյալ ջանքերի արդյունք, քանի որ դրանք իսկապես *փորձարկեցին* բոլոր եղանակներն՝ ապահովելու կենտրոնացված գործընթաց բարեհաջող արդյունքներով:

Համայնքի սոցիալական ծառայությունների գնահատման աշխատանքների նախապատրաստում

Ի՞նչ է համայնքի սոցիալական ծառայությունների գնահատումը

Համայնքի սոցիալական ծառայությունների գնահատումը համայնքում սոցիալական ծառայությունների կարիքի մասին տեղեկությունների պարբերաբար հավաքման, վերլուծության և հաղորդման գործընթաց է, այդ կարիքների բավարարման համար համայնքում տվյալ պահին առկա միջոցների, կարողությունների և ուժեղ կողմերի բացահայտման հետ միասին:

Համայնքի սոցիալական ծառայությունների գնահատումն սկսվում է համայնքը ներկայացնող սոցիալական ծառայությունների ծրագրերի և համայնքի կարիքների մասին տեղյակ մի խումբ բնակիչների ժողովմամբ կամ մոբիլիզացմամբ: Այդ անհատներին մենք անվանում ենք սոցիալական ծառայությունների գործընթացի գլխավոր շահագրգիռ կողմեր, ովքեր կվերլուծեն իրենց սոցիալական ծառայությունների ներկա իրավիճակը, իրենց ունեցած միջոցները, հնարավորությունները, սպառնալիքները, կարիքները, կսահմանեն տեսլականը և առաջնահերթացմամբ կկազմեն փոփոխություն պահանջող հարցերի ցուցակը:

Տեղի բնակիչների միջև այդ համագործակցական աշխատանքն ստեղծում է համայնքային ծառայությունների գնահատման հիմքը, ներառելով մասնագետներ, ովքեր ունեն հարցերի մասին փորձառություն, և այլ կողմեր, ովքեր ամենայն հավանականությամբ զգալու են այդ փոփոխությունների ազդեցությունը (օրինակ՝ հաշմանդամություն ունեցող անձինք, ցածր եկամուտ ունեցող ընտանիքները, գործազուրկները, տեղական իշխանությունները, հավանական ՀԿ-ները և այլն): Աշխատանքի ընթացքում մշակվում է նաև սոցիալական ծառայությունների տեսլականը, որն ուղղորդում է համայնքի գնահատման աշխատանքը՝ նկարագրելու հստակ պատկեր, թե որտեղ է համայնքը ձգտում լինել ապագայում: Գլխավոր շահագրգիռ կողմերն առաջնահերթացում են իրենց հավանական գործողությունները՝ հիմնված գնահատման և ներկա ծառայությունների, միջոցների, կարիքների, ներկա միջավայրի և իրենց առանձին ծրագրերի իրականացման վրա ազդող դրական ու բացասական ուժերի իրատեսական գնահատման վրա: Ուշադրությունը կենտրոնացվում է այն փոփոխության վրա, որը կլինի կայուն՝ ստեղծելու ավելի լավ ապագա իրենց համայնքներում ամենախոցելի խմբերի համար:

Ինչու՞ համայնքները պետք է կատարեն համայնքի սոցիալական ծառայությունների գնահատում

Համայնքում սոցիալական ծառայությունների լավ մտածված գնահատման, որի ժամանակ տեղեկություններ են հավաքվում վստահելի հետազոտական տեղանակներով, արդյունքները կարող են ընդհանրացվել համայնքի բնակիչների մի ամբողջ խմբի համար: Համայնքում սոցիալական ծառայությունների լավ մտածված գնահատումը համայնքի պաշտոնյաներին թույլ է տալիս ունենալ վստահության զգացում, երբ այդ տվյալներն օգտագործում են որպես որոշումների կայացման հիմք: Համայնքի գնահատումը կարելի է նաև օգտագործել ուսումնասիրվող հարցերի գնահատման և դրանց նկատմամբ իրազեկության առաջացման ու փոփոխություններ առաջ բերելու հարցում բնակիչների շահագրգռվածության մեծացման համար: Համայնքներում ամենախոցելի խմբերի համար սոցիալական ծառայությունների գնահատումը կարող է օգնել ջանքերը կենտրոնացնելու այն բաների վրա, որոնք անհրաժեշտ են այս պահին, օգտագործելով ունեցած միջոցները ավելի լավ ապագա ստեղծելու համայնքի անդամների համար: Հիմնադրամները և այլ ֆինանսավորող հաստատությունները, որոնք տրամադրում են միջոցներ գործողությունների ծրագրերի իրականացման համար, հաճախ պահանջում են կարիքների և ռեսուրսների ֆորմալ գնահատում:

Երբ համայնքի պլանավորման խմբերն սկսում են մտածել փոփոխություն առաջ բերելու համար անհրաժեշտ գործողությունների մասին, խմբի անդամները հաճախ հասկանում են, որ իրենք բավականաչափ գիտելիք չունեն գործողությունների ծրագրերի մասին որոշումներ կայացնելու համար, կամ այն մասին, թե ինչպես ընտրել ծրագիր, որը կբավարարի իրենց համայնքի կարիքները, հատկապես ամենախոցելի խմբերի կարիքները: Հնարավոր է այդ խմբերի անդամներն իրենց դատողությունները հիմնում են ընտրովի «պատմությունների» կամ ասեկոսիների վրա, որոնք ավելի շուտ լսել են համայնքի այլ բնակիչներից, քան թե քաղել են ուսումնասիրությունից կամ տեղական տվյալներից:

Տեղի շահագրգիռ կողմերին ուսումնասիրության վրա հիմնված գնահատման գործընթացին մասնակից դարձնելը հանդիսանում է պրոակտիվ մոտեցում, քանի որ նրանք հայտնաբերում են եղանակներ՝ օգնելու իրենց ապագան ձևավորելուն և կերտելուն: Ջանքերը բարձր գերկայության միջոցառումների վրա կենտրոնացնելը և միաժամանակ բացահայտված միջոցներն օգտագործելը նույնպես հաջողություն գրավական կհանդիսանան նոր գործընկերությունների համար, որոնք կձևավորվեն այդ գործընթացի միջոցով, հատկապես համայնքի և ՀԿ-ների միջև, որոնց միջոցով և կիրականացվի համայնքի համար որպես գերակայություն ընտրված ծրագիրը:

Այդ գնահատման ժամանակ օգտագործված եղանակները կենտրոնանում են համայնքի ուժեղ կողմերի և ունեցած միջոցների ու համայնքում առկա սոցիալական ծառայությունների վրա: Կարիքների բացահայտման հետ միասին մենք կենտրոնանում ենք նաև համայնքի ունեցած միջոցների վրա, որոնք ներառում են տեղի բնակիչների, ՀԿ-ների, տեղական ինքնակառավարման մարմինների, գործարարների և այլ հանրային ու մասնավոր հաստատությունների հմտությունները:

Ձեր սոցիալական ծառայությունների գնահատման ուղեցույցի օգտագործումը

Ուսուցանողի/ֆասիլիտատորի համար նախատեսված այս ուղեցույցը, որը դյուրին է օգտվելու համար, տրամադրում է բոլոր անհրաժեշտ նյութերը Հայաստանի համայնքներում ներկայումս առկա սոցիալական ծառայությունների գնահատում իրականացնելու համար, միաժամանակ ուշադրությունը կենտրոնացնելով համայնքների ունեցած միջոցների վրա, որոնք կնպաստեն իրենց նպատակների իրականացմանը: Գնահատման բոլոր նյութերը թարգմանված են, դրված են ՍՊՀՀ սերվերի վրա և պատրաստ են գնահատման հաջորդ շրջանի համար: Քայլ առ քայլ գործընթացը նկարագրվել է համայնքի գնահատման չորս հանդիպումների ընթացքում: Առաջին հանդիպումը համայնքի ղեկավար հանձնախմբի հետ է, որն անվանվում է թիմի ղեկավար կորիզը: Երկրորդ և երրորդ հանդիպումները (30 – 35 մասնակից) համայնքային սոցիալական ծառայությունների գլխավոր շահագրգիռ կողմերի համար են, ներառյալ՝ թիմի ղեկավար կորիզը, ովքեր իրականացնելու են գնահատումը: Վերջին հանդիպումը ղեկավար հանձնախմբի/թիմի ղեկավար կորիզի և համայնքում ամենաառաջնահերթ ծրագրի իրականացման համար ընտրված ՀԿ-ի հետ է:

Յուրաքանչյուր հանդիպման ժամանակ մասնակիցներին բաժանվում են նյութեր: Խորհուրդ չի տրվում դրանք տրամադրել մասնակցի ձեռնարկի տեսքով, քանի որ նախքան դասընթացի ժամանակ քայլ առ քայլ մոտեցմանը ծանոթանալը առաջադրանքները կարող են խրթին թվալ: Փորձնական դասընթացի ժամանակ մասնակիցները նախընտրում էին լսել դասընթացը և քայլ առ քայլ աշխատել դասավանդողի հետ: Դա հնարավորություն տվեց յուրաքանչյուր համայնքին, անկախ մեծությունից, յուրաքանչյուր առաջադրանք հաջողությամբ ավարտել անհրաժեշտ ուսուցումից հետո: Բոլոր նյութերն արդեն թարգմանվել են հայերեն և դրված են ՍՊՀՀ սերվերի վրա:

Առաջին հանդիպումը նախատեսվում է համայնքի թիմի ղեկավարների համար, ովքեր անվանվում են ղեկավար հանձնախումբ կամ թիմի ղեկավար կորիզ: Հինգից յոթ մարդուց բաղկացած խումբը պետք է ներառի ներկայացուցիչ տեղական ինքնակառավարման մարմնից, որը պետք է համակարգի տեղում աշխատանքները, համայնքային և մարզային մարմինների սոցիալական ծառայությունների ներկայացուցիչներ, սոցիալական ծառայությունների գծով համայնքի ղեկավարներ, տեղական գործարար ներկայացուցիչ, ով մտահոգված է համայնքում ամենախոցելի խմբերի հարցերով և մարդիկ, ովքեր անցյալում մաքառել ու հասկանում են իրենց համայնքի խոցելի խմբերի առջև ծառացած արգելքներն ու նրանց կարիքները:

Յուրաքանչյուր հանդիպում նախատեսված է հզորացնելու համայնքի ղեկավարների և գլխավոր շահագրգիռ կողմերի կարողությունները, միաժամանակ իրականացնելով նաև

կարիքի գնահատում: Յուրաքանչյուր հանդիպման մաս է կազմում նաև թիմի կառուցմանն ուղղված աշխատանքը, քանի որ այն մեծացնում է երկարաժամկետ կայունության և համակարգման համար անհրաժեշտ կարողությունները: Վերջում համայնքն է, որ պետք է համակարգի աշխատանքները իր ՀԿ-ների հետ բնակիչներին անհրաժեշտ ծառայությունները տրամադրելու համար:

Ծրագրի ընթացքի գծապատկերում տրված է գործընթացի նկարագրությունը: Ժամկետները կարող են թեթևակիորեն փոխվել, սակայն պետք է այնպես կազմել, որ համայնքն ունենա ժամանակ հանդիպումից հանդիպում առաջադրանքները կատարելու համար:

Հայաստանի սոցիալական ծառայությունների գնահատման «Մաքառելուց՝ քարտեզագրություն» ծրագրի ընթացքի գծապատկեր

Քայլ 1. Մասնակցության հրավեր տեղական համայնքներին

Դիմումն ուղղված է համայնքներին, առաջարկները գնահատված են, շնորհավորական նամակ և հրավեր մրցույթի մասնակիցների ժողովին և առաջին դասընթացը թիմի 5-7 ղեկավարների համար

4 շաբաթ
անց...

Քայլ 2. Մրցույթի մասնակիցների հանդիպում և տեղական թիմի ղեկավարների ուսուցում

Համայնքի ղեկավար կորիզի ստեղծումը, 30-35 տեղացի գլխավոր շահագրգիռ մասնակիցների բացահայտման և հավաքագրման դասընթաց, ունեցած միջոցների վրա հիմնված գնահատում, ժամկետներ, գնահատման գործընթաց, համայնքի կողմից պատասխանատվություն, առաջադրանքներ ղեկավարներին

4 շաբաթ
անց

Քայլ 3. Համայնքի մասնակցությամբ սոցիալական ծառայությունների գնահատման I փուլ

Մասնակիցների թիմի կառուցում & խմբային գործընթացի ուսուցում, գնահատման գործընթաց՝ միջոցներ – հնարավորություն-վտանգ-կարիք-գնահատում, առաջադրանքների մշակում, առաջադեմ փորձի ներկայացում, հանձնարարված առաջադրանքի վերլուծություն

4 շաբաթ
անց

Քայլ 4. Համայնքի մասնակցությամբ սոցիալական ծառայությունների գնահատման II փուլ

Տեսլականի վերջնական տարբերակը, կամուրջ դեպի ցանկալի ապագան, առաջավոր փորձ՝ 2-րդ դասընթաց, նպատակի սահմանում, ուժային դաշտի վերլուծություն, չափանիշների վերանայում, նպատակների/գործողությունների առաջնահերթացում, առաջարկի ներկայացման հրավերի (ԱՆՀ) ծանոթացում, առաջադրանքներ ղեկավարներին

4 - 6
շաբաթ

Քայլ 5. Գործընկերության և կայունության ծրագրի մշակում

Դասընթաց՝ համայնքային համագործակցություն, ծրագրի տրամաբանության մոդելը, գործողությունների ծրագրի մշակում, գնահատում, ցուցանիշներ, մոնիթորինգ, արդյունքներ, արդյունքների մասին փոխադարձ տեղեկացում, համագործակցությունն ամրապնդող առաջադրանքներ

Մոնիթորինգ

Քալ 6. Կայունություն, հաշվետվություն, մոնիթորինգ, գնահատում

Առաջին տարվա եռամսյակային հաշվետվություն և գնահատում, ցուցանիշների, գործողությունների և արդյունքի մոնիթորինգ, քայլերի/արդյունքների տարեկան հաշվետվություն

Տեղական համայնքների ներգրավում

Յոդ նախապատրաստել հաջողության համար

Առաջին քայլերը նախատեսված են սոցիալական ծառայությունների գնահատման ծրագրի հաջող իրականացման համար: Այն սկսվում է տեղական համայնքներին գնահատման գործում մասնակցության համար դիմելու հրավերով: Այդ գործընթացն սկսելիս պետք է ձգտել որքան հնարավոր է համայնքի շատ ներկայացուցիչ ընդգրկել, ապահովելով, որ տեղական համայնքներն ստանան դիմումի ձևը և բավական ժամանակ ունենան պատրաստվելու և դիմելու համար: Ապահովեք, որ տեղական համայնքի ղեկավարներն իսկապես ստանան նամակը:

Փորձնական շրջանի ընթացքում ՍՊՀՀ ծրագրի աշխատակից Քրիստինե Գրիգորյանը աշխատել է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության (ԱՍՀՆ) հետ՝ գնահատումների առաջին պիլոտային շրջանի համար հավանական համայնքներին ընտրելու նպատակով: ԱՍՀՆ-ի կողմից նշվել է եռետուն համայնք՝ հինգ մարզից, և հրավիրվել մասնակցելու փորձնական գնահատմանը: Համայնքներն ընտրվել են ըստ հետևյալ չափանիշների՝

- 1) գլխավոր շահագրգիռ կողմերի լայն սպեկտր ներգրավելու ունակություն
- 2) տեղական միջոցներով և բնափրային աջակցության տեսքով ծրագիրը համաֆինանսավորելու հնարավորություն
- 3) համապատասխան ՀԿ-ների առկայություն՝ ապահովելու իրականացման համար անհրաժեշտ կարողությունները:

Բոլոր երեք չափանիշներն էլ կայունության համար առանցքային և չափազանց կարևոր տարրեր են և պետք է հաշվի առնվեն ծրագիրը հետագայում կրկնելու ժամանակ:

Յայտ ներկայացնելու հրավեր տեղական համայնքներին

Փորձնական շրջանի ժամանակ ուղարկվել է նամակ-հրավեր և մանրամասն տեղեկություններ, որոնք համայնքները պետք է իմանան պիլոտային ծրագրի համար դիմելու նպատակով:

Այդ նամակը պետք է պարունակի տեղեկություններ ծրագրի, վերջնաժամկետների, հայտի համար անհրաժեշտ տվյալների մասին, ներառյալ՝ ծրագրի համար պահանջվող ցանկացած համաֆինանսավորում: Դուք կարող եք միայն գնահատել այն տեղեկությունները, որոնք պահանջում եք ձեր հայտում, հետևաբար ուշադիր կերպով մտածեք, թե ինչ պահանջներ է անհրաժեշտ ներառել ձեր կողմից ուղարկվող մասնակցության հրավերում հրավերին արձագանքած համայնքներին ճիշտ գնահատելու համար:

Մասնակցության հրավեր

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը և ԱՄՆ ՄՁԳ Սոցիալական պաշտպանության համակարգերի հզորացման (ՄՊՀՀ) ծրագիրը հրավիրում են տեղական ինքնակառավարման մարմիններին, սոցիալական ծառայության ներկայացուցիչներին և համայնքի ներկայացուցիչներին համագործակցելու համայնքի սոցիալական ծառայության կարիքների գնահատման, սոցիալական պլանավորման և սոցիալական պայմանագրերի կնքման միջոցառումներին:

Նախաձեռնության նպատակն է ցուցադրել համայնքի սոցիալական կարիքների գնահատման առաջավոր փորձը, սոցիալական ծառայությունների պլանավորումը և պայմանագրի հիման վրա դրանց պատվիրակումը ոչ կառավարական կազմակերպություններին:

Նախաձեռնության խնդիրներն են՝

- Մշակել համայնքի սոցիալական կարիքների գնահատման, պլանավորման և պատվիրակման միջոցառումների համար օգտակար գործիքներ համայնքային աշխատանքային խումբ ընտրելու և միջազգային փորձագետի կողմից նրանց ուսուցում տրամադրելու միջոցով:
- Մասնակցելով ֆինանսավորմանը ցուցադրել համաֆինանսավորման եղանակով ոչ կառավարական կազմակերպություններին համայնքային կայուն, նվազ ծախսատար սոցիալական ծառայությունների պատվիրակման գործընթացը:

Եթե ցանկանում եք մասնակցել նախաձեռնությանը, խնդրում ենք արձագանքել այս նամակին մինչև 2008թ. մարտի 5-ը: Ձեր պատասխանը պետք է ներառի՝

- ձեր համայնքում ներկայումս տրամադրվող սոցիալական ծառայությունների նկարագրությունը
- ձեր համայնքում առկա ոչ կառավարական կազմակերպությունները
- համայնքի շահագրգռվածությունն այս ծրագրով
- համայնքի կողմից դրամաշնորհային ծրագրում 10 – 20% ներդրում կատարելու հնարավորությունը

Լրացուցիչ տեղեկությունների համար խնդրում ենք կապվել Զրիստինե Գրիգորյանի հետ՝ հեռախոսով՝ (374 10) 54-26-11:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն

Էմի Ռեմմ

Ծրագրի ղեկավար

ԱՄՆ ՄՁԳ Սոցիալական պաշտպանության համակարգերի հզորացման ծրագիր

Չայտերի գնահատում

Գնահատումը պետք է լինի որքան հնարավոր է թափանցիկ, ծրագրի ընթացքում կիրառված գործընթացի վավերագրմամբ: Դուք կարող եք միայն գնահատել ի պատասխան ձեր հայտի/մասնակցության հրավերի տրամադրված տեղեկությունները: Հետևաբար ձեր հայտը/մասնակցության հրավերը պետք է հիմք հանդիսանան գնահատման համար նախատեսված բոլոր հարցերի համար (որոնց դուք կարող եք միավորներ տալ): Թափանցիկ գործընթաց ապահովելու համար դիմումները պետք է գնահատվեն մի քանի հոգու կողմից: Բոլոր նրանք, ովքեր գնահատում են ծրագրերը, պետք է օգտագործեն նաև առաջարկի գնահատման նույն թերթիկները և ունենան պատկերացում, թե ինչպես է պետք գնահատել յուրաքանչյուր համայնք ըստ իր առանձին առավելությունների:

Փորձնական շրջանի ընթացքում ՍՊՀՀ և ԱՍՀՆ աշխատակիցները գնահատել են պիլոտային հայտերն, օգտագործելով նույն ձևը: Այնուհետև նրանք միավորել են գնահատականները և քննարկել, թե որ համայնքներն են այժմ պատրաստ համայնքում սոցիալական ծառայությունների գնահատման լրիվ ծրագիր իրականացնելու համար:

Ծանոթացեք փորձնական շրջանի ընթացքում օգտագործված առաջարկների գնահատման թերթիկին: Տեսեք, թե առաջարկի գնահատման թերթիկի հարցերն ինչպես են ուղղակիորեն կապվում հայտի նամակում նշված կետերի հետ:

Փորձնական գնահատման ժամանակ գործընթացի ապացուցման համար անհրաժեշտ էր Հայաստանի տարբեր մարզերում գտնվող համայնքների ընդգրկում, հետևաբար բնակավայրը և բնակիչները կարևոր էին գնահատման համար: Պիլոտային շրջանի համար կարևոր էր նաև ՀԿ-ների հետ համագործակցելու կարողություն ունեցող համայնքների ընտրությունը: Ուշադրություն դարձրեք այն հանգամանքին, որ գնահատվում է նաև համայնքի կողմից համաֆինանսավորելու հնարավորությունը, քանի որ համայնքները պետք է պարտավորություն ստանձնեն ներդնել դրամամիջոցներ կամ բնափրային նվիրատվություններ գործընթացի և վերջնական ծրագրի ընտրության գործում պատասխանատվությունը կիսելու համար:

Ըստ գնահատականների թերթիկի գնահատվում է համայնքի պատասխանատվության, ծրագիրն իրականացնելու կարողության, տեղական ՀԿ-ների հետ համայնքային համագործակցության, աշխատանքների պատվիրակման փորձի և ֆինանսական ու բնափրային նվիրատվություններով համաֆինանսավորման ունակության մասին ամբողջ կարևորագույն տեղեկատվությունը, համակարգման համար բոլոր կարևոր տարրերը, որոնք ապագայում կօգնեն ապահովելու արգասաբեր գործընկերություն:

Ուշադիր կերպով հաշվի առեք այն ամենն, ինչը հույս ունեք ձեռք բերել ձեր ծրագրի միջոցով, և մշակեք առաջարկները գնահատելու այնպիսի թերթիկ, որն արտացոլի ձեր ուղարկած մասնակցության հրավերի մեջ պահանջվող բոլոր տեղեկությունները: Եվ դարձյալ, դուք միայն կարող եք գնահատել այն, ինչը պահանջել էք ձեր հայտում կամ մասնակցության հրավերում: Հետևաբար ուշադիր կերպով նախատեսեք այդ քայլերն՝ ապահովելու թափանցիկ գործընթաց, որտեղ բոլոր համայնքները հնարավորություն ունեն ներկայացնելու նույն տեղեկությունները, որոնք դուք այնուհետև կօգտագործեք նրանց առաջարկները գնահատելու համար:

Ծանոթացեք փորձնական շրջանի առաջարկի գնահատման միավորների թերթիկին օրինակների համար, որոնք միգուցե ցանկանաք ներառել:

Առաջարկի գնահատման միավորների թերթիկ

Դիմող համայնքը և կարգավիճակը _____

Մարզ _____ Համայնքի մեծությունը _____

Համայնքում առկա սոցիալական ծառայությունների նկարագրությունը _____

1	2	3	4	5
---	---	---	---	---

Ծրագիրն իրականացնելու կարողությունը _____

1	2	3	4	5
---	---	---	---	---

Համայնքային համագործակցությունը տեղի ՀԿ-ների հետ _____

1	2	3	4	5
---	---	---	---	---

Համայնքի ծառայությունների պատվիրակման փորձը _____

1	2	3	4	5
---	---	---	---	---

Համայնքի բյուջեից համաֆինանսավորելու ունակությունը (առնվազն 10%) _____

Դիտողություններ առաջարկի և բյուջեի մասին _____

Ընդամենը միավորները _____

Առաջարկություններ

- Առաջարկվում է ընտրության համար
- Չի առաջարկվում ֆինանսավորման համար

Ամսաթիվ _____ Ստորագրություն _____

Դիմորդին պատասխան նամակ

Բոլոր դիմորդներն արժանի են պատասխան նամակ ստանալու և նրանց պետք է շնորհակալություն հայտնել դիմելու համար: Եթե նրանք չեն ընտրվել, պարզապես ավելացրեք հրավեր, որ դարձյալ դիմեն երկրորդ շրջանի համար, և տեղեկացրեք, որ ունեն իրենց գնահատման թերթիկը տեսնելու հնարավորություն: Դա համայնքների համար հանդիսանում է հետագայում ծրագրերի և դրամամիջոցների համար դիմելու փորձ:

Ստորև բերված է պիլոտային շրջանում հաջողության հասած դիմորդներին ուղարկված նամակի օրինակ, որտեղ նրանց շնորհավորելու հետ մեկտեղ նշվում է, որ պետք է ներկայացնել ծրագրում մասնակցելու պատրաստակամությունը հավաստող նամակ՝ հաստատված քաղաքապետի կողմից, որտեղ նշված կլինի համայնքի կողմից կատարվող ներդրումը: Այն տրամադրում է նաև համայնքի ղեկավար կորիզի հետ առաջին հանդիպման մասին տեղեկություններ:

10 մարտի 2008թ.

*Պրն. /Տկն (Դիմողի կոնտակտային անձի անունը)
(Դիմող կազմակերպության անվանումը)
(Դիմող կազմակերպության հասցեն)*

Հարգելի պրն/տկն (Դիմողի կոնտակտային անձի ազգանունը)

Սույն գրությամբ շնորհավորում ենք Ձեզ և տեղեկացնում, որ Համայնքային սոցիալական ծառայությունների զարգացմանն ուղղված Ձեր նամակ-հրավերի պատասխանն ընդունված է և համապատասխանում է ծրագրի նպատակներին: Սոցիալական պաշտպանության համակարգերի հզորացման (ՍՊՀՀ) ծրագրի կողմից հաջորդ շաբաթվա ընթացքում կանցկացվի դիմորդների դասընթաց, որը տեղի կունենա ժամը 10:00-ից մինչև 16:00-ը Երևան, Բաղրամյան 18 (մուտքը Չառուբյան փող.) հասցեում տեղակայված ՍՊՀՀ գրասենյակում:

Հարկ կլինի, որ դասընթացին մասնակցեն Ձեր համայնքի 5-7 ներկայացուցիչ, ովքեր համաձայն են հանդիսանալ համայնքի առաջատար թիմը: Այդ թիմում պետք է ընդգրկված լինեն քաղաքապետարանի ներկայացուցիչներ և համայնքի սոցիալական ծառայությունների զարգացմամբ շահագրգռված անձինք: Ներկայացուցիչներից 4 –ը պետք է ուղղակիորեն աշխատեն համայնքի սոցիալական ծառայություններում:

Սույն նամակով, խնդրում ենք Ձեզ ներկայացնել քաղաքապետի կամ քաղապետի կողմից գրություն, նշելով ծրագրին ներդրում կատարելու Ձեր պատրաստակամությունը և գումարը: Մենք ակնկալում ենք 10% ոչ պակաս համայնքային ներդրում պատվիրակման ծառայություններին (օրինակ, եթե համայնքը պատրաստ է սոցիալական ծառայությունների պատվիրակման համար ներդնել \$1500, ապա ՍՊՀՀ ծրագիրը կներդնի \$8500, ընդհանուր ծրագրի արժեքը կկազմի \$10000): Դրամաշնորհի գումարը նաև կախված կլինի համայնքի բյուջեից երկարատև ֆինանսավորման կարողություններից:

Խնդրում ենք նաև Ձեր գրության մեջ հավաստել, համայնքի պատրաստակամությունը մասնակցել կարիքների գնահատմանը, դասընթացներին և ծրագրի նպատակների իրականացմանը:

Շնորհակալություն համայնքային սոցիալական ծառայությունների զարգացման ծրագրի հանդեպ հետաքրքրություն ցուցաբերելու համար:

Հարգանքով՝

Էմի Ռեմմ

Ծրագրի ղեկավար

Մրցույթի մասնակիցների հանդիպումը և առաջին դասը

Ձեր առաջին հանդիպումը՝ համայնքային թիմի ղեկավարների 5 – 7 հոգանոց փոքր խմբով, ուղղված կլինի տեղական ղեկավար հանձնախմբի կամ թիմի ղեկավար կորիզի ստեղծմանը՝ սկսած համայնքի կարիքների գնահատումից մինչև առաջնահերթ ծրագրերի իրականացումը: Թիմի ղեկավար կորիզը պետք է ներկայացնի համայնքը, այնպես, որ փորձնական շրջանի համար մենք առաջարկում ենք ընդգրկել մի ներկայացուցիչ տեղական ինքնակառավարման մարմնից, ով կկազմակերպի ամբողջ հաղորդակցությունը տեղում և կհանդիսանա 7 ղեկավարներից մեկը: Ղեկավար կորիզի մյուս անդամները ևս պետք է լավ պատկերացում ունենան համայնքի սոցիալական հարցերի, հատկապես սոցիալական ծառայությունների հետ կապված հարցերի, և իրենց համայնքի ամենախոցելի խմբերի կարիքների մասին: Առաջարկվում է ընդգրկել նաև գործարար հատվածի ներկայացուցիչներ:

Համայնքային թիմի ղեկավար կորիզի հետ առաջին հանդիպման խնդիրն է հող նախապատրաստել ծրագրին և դրա ընթացքին նրանց նվիրումի ու խանութավառության համար: Հետևաբար պետք է պատրաստվել հանդիպմանը՝ սահուն ներկայացնելու գործընթացը, և ամբողջ ուշադրությունը նվիրել գործընթացի վերաբերյալ բոլոր հավանական հարցերին պատասխանելուն: Պետք է նաև թիմի կառուցման մի քանի վարժությունների և մասնակիցների դերը բացատրելու միջոցով ստեղծել այնպիսի թիմ, ինչպիսին անհրաժեշտ է ծրագրի իրականացման համար:

Մրցույթի մասնակիցների հանդիպման/ ղեկավար կորիզի ուսուցման խնդիրները՝

1. կառուցել թիմի ղեկավար կորիզը
2. մեծացնել գլխավոր շահագրգիռ կողմերի մասնակցության կարևորության ըմբռնումը
3. մեծացնել ներառական մասնակցային գործընթացի մասին ըմբռնումը
4. մեծացնել համայնքում սոցիալական ծառայությունների ներկա վիճակի մասին պատկերացումը
5. մեծացնել սոցիալական ծառայությունների գնահատման գործընթացի մասին պատկերացումը
6. մեծացնել ունեցած միջոցների վրա հիմնված գնահատման մասին պատկերացումը
7. մեծացնել թիմի ղեկավարների դերի և ծրագրի ժամկետների մասին պատկերացումը
8. Թիմի ղեկավարներն առանձնացնում են գլխավոր շահագրգիռ կողմերին և նրանց հավաքագրում հաջորդ հանդիպմանը մասնակցելու համար

Կազմեք համայնքի ղեկավար թիմի առաջին հանդիպման խնդիրների ցանկը: Այդ հանդիպման համար առաջարկվող բոլոր նյութերը հիմնավորում են այդ խնդիրները և, հետևաբար, համարվում են ծրագրի հաջողության համար խիստ անհրաժեշտ տարրեր:

Առաջին քայլը նրանց ողջունելն է ու թիմի կառուցման աշխատանքն սկսելը, քանի որ դա նրանց անհրաժեշտ է հաջողության հասնելու համար:

Մի ենթադրեք, որ նրանք իսկապես գիտեն միմյանց: Յուրաքանչյուր հանդիպման սկզբում միշտ անցկացրեք թիմի ամրապնդմանը նվիրված կամ միմյանց ճանաչելուն ուղղված վարժություններ:

Ներկայացման սլայդները մանրամասն ցույց են տալիս պիլոտային շրջանում թիմի կառուցման համար նախատեսված վարժությունները: Դուք կարող եք դրանք լրացնել կամ ընտրել այս դասընթացի համար նախատեսված նույն խնդիրներին ուղղված մի փոքր այլ վարժություններ:

Սլայդերի ծանոթագրությունները ներկայացնողի համար են և մասնակիցներին չեն տրամադրվում: Մասնակիցները պետք է ստանան սլայդների տպագիր օրինակները՝ երեքից հինգ էջ, որտեղ կունենան տեղ իրենց սեփական գրառումները կատարելու համար: Վարժությունների պատասխանները ցույց տվող սլայդները դուրս տրվող նյութերի մեջ ընդգրկել պետք չէ:

Որպես ներկայացնող, դուք միշտ պետք է հաճույք ստանաք հանդիպումից և ստեղծեք այնպիսի միջավայր, որտեղ բոլոր մասնակիցներն էլ հաճույք ստանան հանդիպումից: Փորձնական շրջանի ժամանակ մատուցվեց խմիչք, թխվածք, նախաճաշ և թիմային աշխատանքի համար հարմարավետ տարածք: Նախքան մասնակիցների գալը ստուգվում էին բոլոր սարքերը, իսկ նյութերը տրամադրվում էին անմիջապես հանդիպման սկզբում ստորագրաթերթիկում գրանցվելուց հետո:

Հետևյալ նյութերը մանրամասն ներկայացնում են 2008թ. պիլոտային համայնքների համար անցկացված հանդիպումը:

Թիմի ղեկավար կորիզի հանդիպում-սեմինար

Առաջին հանդիպման օրակարգը կազմվել էր այնպես, որ ամբողջ դասընթացի հետ մեկտեղ ժամանակ լինի իրականացնելու նաև թիմի կառուցման վարժություններ ընդմիջումների և նախաճաշի ընթացքում: Թիմի ղեկավար կորիզի անդամներին հարկավոր է ժամանակ՝ քննարկելու, թե ինչպես աշխատել միասին գնահատման գործում իրենց դերին ու գործընթացի մասին մանրամասնություններին տեղեկանալուց հետո:

Այդ հանդիպումից հետո նրանց առաջին հանձնարարության՝ հավաքագրել 30-ից մինչև 35 տեղացի շահագրգիռ մասնակիցներ, կատարման համար պահանջվում է թիմային մոտեցում: Հետևաբար այդ առաջին հանդիպման ընթացքում ուսուցումն անցկացնելիս ուշադրությունը պետք է կենտրոնացնել թիմի կառուցման վրա: Ինչպես տեսնում եք, օրակարգը մասնակիցներին հնարավորություն է տալիս ընդմիջումների և նախաճաշի ընթացքում միմյանց հետ զրուցել: Օրակարգը կազմվել էր նաև այնպես, որ դասընթացի վարման արագությունը հաճելի լինի մասնակիցների համար և չստիպի ձեզ՝ որպես վարող-ներկայացնողի, շտապել:

Օրակարգն ուղղակիորեն համապատասխանում է այդ հանդիպման համար նախատեսված ներկայացմանը և մասնակիցներին տրամադրվելիք նյութերին: Այնպես որ մասնակիցների գալուց առաջ պետք է ստուգել պրոյեկտորը և այն պատրաստել ցուցադրման համար: Խորհուրդ է տրվում ունենալ նաև գրատախտակ հարցերը գրելու, հասկացությունները հստակեցնելու և խմբային վարժությունների ժամանակ օգտագործելու համար:

Վարողին/դասավանդողին անհրաժեշտ պարագաներ

- ❖ գրատախտակ և թուղթ
- ❖ գունավոր մարկերներ
- ❖ պրոյեկտոր
- ❖ ներկայացում՝ շահագրգիռ կողմերի ներգրավմամբ
- ❖ տրամադրվող նյութերը՝

1. Օրակարգ՝ շահագրգիռ կողմերի ուսուցում սոցիալական ծառայությունների զարգացման և մրցույթի մասնակիցների հանդիպման համար:

2. Սլայդներ տրամադրվող նյութի տեսքով՝ 3 սլայդ ամեն էջում, յուրաքանչյուր սլայդ ունի տեղ նշումներ կատարելու համար:

3. Միջոցներ/հնարավորություններ/սպառնալիքներ/կարիքներ խմբային վերլուծության նյութեր:

4. Ընտրել մասնակիցներին տրամադրվելիք նյութերը:

- ❖ Վարողին անհրաժեշտ նյութեր՝ շրջանակից դուրս մտածելու վարժության համար հրահանգներ:

Բոլոր նյութերը և սլայդները թարգմանվել են հայերեն և դրվել ՍՊՀ սերվերի վրա՝ պատրաստ ձեր առաջին հանդիպման համար: Դասընթացը նախատեսվում է իրականացնել հինգ ժամ տևող սեմինար-պարապմունքի տեսքով, ներառյալ՝ նախաձաշը: Ուշադիր վերստուգեք օրակարգը բոլոր մասնակիցների համար հարմար, հաճելի տեմպ ապահովելու համար:

Գլխավոր շահագրգիռ կողմերի ներգրավում (ներկայացում)

Ներկայացումը պարունակում է վարողի համար նշումներ: Դրանք ձեզ՝ որպես ներկայացնողի, համար օգտակար կլինեն: Նշումները ցույց են տալիս, թե փորձական շրջանի ժամանակ հանդիպման նպատակներին հասնելու համար ինչն էր ավելի արդյունավետ:

Մասնակիցների համար նախատեսված նյութերն այդ սլայդների թղթային օրինակներն են՝ երեք էջ, յուրաքանչյուր սլայդ նշումների համար տեղով, որտեղ մասնակիցները կարող են գրի առնել իրենց մտքերը: Փորձական գնահատման ժամանակ երևաց, որ հաշվի առնելով սովորելու տարբեր ոճերը, ձեր մասնակիցների համար ամենավաղ գրառումներ կատարելու հնարավորություն ունենալն է: Դա հնարավորություն տվեց դասավանդողին ունենալ նշումներ կատարելու հիանալի տարածք: Մասնակիցներին երբեք ցույց մի տվեք ծանոթագրությունների մասերը: Հիշեք, որ դրանք վարողի-դասավանդողի համար են:

Մշտապես պատրաստվեք նախքան հանդիպումը, կարդացեք ամբողջ ներկայացումը, վարողի համար նախատեսված նշումներին ավելացնելով ձեր ուրույն ձևակերպումները և ոճը, և միաժամանակ պահեք դասընթացի հիմնական ուղերձը: Գլխավոր շահագրգիռ կողմերի հետ առաջին հանդիպման համար պատրաստված 14 սլայդները հանդիսանալու են ամբողջ ծրագրի համար տեղեկատվության հիմքը:

Տրամադրվող նյութերը՝

Գլխավոր շահագրգիռ կողմերի ուսուցման և մրցույթին մասնակիցների հանդիպման օրակարգը

Միջոցներ/հնարավորություններ/սպառնալիքներ/կարիքներ՝ աշխատանքային թերթիկները

Ձեր համայնքի գլխավոր շահագրգիռ կողմերի ընտրությունը

Վարողի համար նախատեսված պարագաներ

Շրջանակից դուրս մտածողություն

Համայնքի սոցիալական ծառայությունների գնահատման առաջին հանդիպումը

Շահագրգիռ կողմերի հետ առաջին հանդիպման ծրագրումը

Համայնքի գլխավոր շահագրգիռ կողմերի հետ առաջին հանդիպումը պետք է լինի և՛ զվարճալի, և՛ իրագործի հաջողության հասնելու համար անհրաժեշտ խնդիրները: Դուք ցանկանում եք, որ մասնակիցները սովորեն, մտքերով կիսվեն միմյանց հետ, աշխատեն որպես թիմի անդամներ և հասկանան, որ կարող են առաջ բերել փոփոխություն իրենց համայնքի համար:

Դուք կտեսնեք, որ ձեր թիմի ղեկավար կորիզի հետ առաջին հանդիպման որոշ խնդիրներ թեթևակիորեն ձևափոխված տեսքով կրկնվում են նաև ամբողջ խմբի հետ հանդիպման ժամանակ: Հավասարապես կարևոր է, որ համայնքի գլխավոր շահագրգիռ

Համայնքի սոցիալական ծառայությունների գնահատման առաջին հանդիպման նպատակները՝

1. մեծացնել նրանց մոտ իրենց կարևորության ըմբռնումը՝ որպես տեղական շահագրգիռ կողմ
2. մեծացնել նրանց ըմբռնումը թիմի անդամ լինելու մասին
3. մեծացնել համայնքի սոցիալական ծառայությունների գնահատման գործընթացի ըմբռնումը
4. մեծացնել ունեցած միջոցների վրա հիմնված գնահատման մասին ըմբռնումը
5. մեծացնել թիմի անդամի վարքագծի մասին պատկերացումը և դրա կիրառումը՝ հիմնական կանոնների մշակում, մտային գրոհի եղանակները, վարողների, զեկուցողների, խմբային գործընթացի, թիմի կայանալուն նպաստողների և խանգարողների, փոխզիջման վրա որոշում կայացնելու, սոցիալական պայմանագրերի կնքման դերը

կողմերը հասկանան իրենց դերը և գործընթացի համար իրենց մասնակցության կարևորությունը: Հաջողության հասնելու համար նրանք պետք է սովորեն նաև միմյանց հետ աշխատել:

Անհրաժեշտ է ամբողջ խմբին բերել գործընթացի, առկա միջոցների վրա հիմնված գնահատման մասին հիմնական ըմբռնման և այն բանին, թե ինչ խմբային վարքագծեր են իրենցից պահանջվում ընդունել: Այդ հանդիպման ժամանակ թիմի կառուցման վարժությունները միահյուսվում են գնահատման առաջին քայլերի կատարման հետ:

Պատրաստ եղեք, որպեսզի հանդիպումներն անցնեն հարթ, բոլոր վարժությունների համար բավարար ժամանակով և լինի տարածք չորս աշխատանքային խմբի բաժանման և առանձին խմբերով աշխատանքի համար:

Օրակարգը պետք է դարձյալ այնպես կազմել, որ տեսնվի հաճելի լինի բոլոր վարժություններն անելու ժամանակ: Ներկայացումն ընդգրկում է այս դասընթացի համար անհրաժեշտ բոլոր նյութերը, ինչպես նաև լրացուցիչ նյութեր:

Վերանայեք ներկայացումը և բոլոր նյութերը՝ ապահովելու հաճելի դասընթաց, որտեղ գնահատման առաջին

վարժությունները կուղեկցվեն ծրագրի հաջողության համար անհրաժեշտ թիմային հմտությունների ձեռքբերմամբ: Հանդիպման ավարտին մասնակիցները պետք է կազմավորված լինեն որպես թիմ, որպեսզի հաջողությամբ կատարեն հաջորդ հանդիպման համար անհրաժեշտ տնային աշխատանքը:

Փորձնական շրջանի ընթացքում նախքան գնահատման գործընթացին անցնելը թիմի ղեկավար կորիզի համար անցկացվեց մեկ ժամանոց հանդիպում: Այնուհետև նրանց խնդրեցինք օգնել առանձին խմբերի աշխատանքները վարելու և զեկուցելու գործում: Այդ նախնական հանդիպումը թիմի կառուցման աշխատանքի ավելի մեծ հնարավորություն տվեց այն անձանց հետ, ում առաջարկվելու էր դառնալ համայնքային գործընկերության մաս և նպաստել նրանց ծրագրերի իրականացման հաջողությանը:

Հանդիպման համար վարողին/դասավանդողին անհրաժեշտ պարագաներ

- ❖ Գրելու թուղթ՝ ամրացնելու ստեղծով
- ❖ Գունավոր մարկերներ
- ❖ Պրոյեկտոր և սլայդներ
- ❖ Հանդիպման նյութեր՝
 1. օրակարգեր՝ թիմի ղեկավար կորիզի հետ նախնական հանդիպման և գլխավոր շահագրգիռ կողմերի առաջին գնահատման համար
 2. Սլայդներ՝ յուրաքանչյուր էջում 3 սլայդ՝ նշումների համար տեղերով
 3. նախնական հանդիպումը վարողի նյութեր
 4. հիմնական կանոնների ուղեցույց
 5. մտային գրոհի ուղեցույց
 6. փոխզիջման հիման վրա որոշումների կայացման ուղեցույց
 7. ունեցած միջոցներ/հնարավորություններ/սպառնալիքներ/կարիքներ խմբային աշխատանքի նյութեր
- ❖ Ներկայացնողին-դասավանդողին անհրաժեշտ նյութեր՝ տեսլականի մշակման օրինակներ, փորձնական համայնքների առաջին գնահատումներից օրինակներ:

Բոլոր նյութերը և սլայդները թարգմանվել են հայերեն և դրվել ՍՊՀՀ սերվերի վրա՝ պատրաստ երկրորդ հանդիպման՝ գլխավոր շահագրգիռ կողմերի հետ առաջին գնահատման, համար: Այդ հանդիպումը նախատեսվում է անցկացնել երկու մասով: Առաջին մեկ ժամանոց նախնական հանդիպումը թիմի ղեկավար կորիզի հետ է: Երկրորդը՝ բոլոր գլխավոր շահագրգիռ կողմերի հետ, ներառյալ՝ թիմի ղեկավար կորիզը, և հանդիսանում է 6-ժամանոց սեմինար պարապմունք, ներառյալ՝ նախաձաշը:

Նախնական պարապմունք համայնքի թիմի ղեկավար կորիզի համար

Թիմի ղեկավար կորիզի համար նախատեսված նախնական պարապմունքով սկսվում է համայնքի առաջամարտիկների նախապատրաստումը գնահատման իրականացման գործում իրենց ապագա դերին: Հետևաբար գլխավոր շահագրգիռ կողմերի հետ առաջին երկու հանդիպումների ընթացքում պետք է խնդրեք թիմի ղեկավարներին ձեզ օգնել ամբողջ խմբի և առանձին խմբերով աշխատանքների ժամանակ:

Մեկ ժամանոց նախնական քննարկում`

- Ձեր` որպես առանձին խումբը վարողի, դերը
- Առանձին խմբերով աշխատանքի ժամանակ գրառումներ կատարողների դերը
- Խմբային գործընթացի ըմբռնումը` խմբի կազմավորման փուլերը
- Ի՞նչն է նպաստում և ի՞նչն է խանգարում խմբի/թիմի կառուցմանը
- Ի՞նչպես խթանել մասնակցությունը
- Մտային գրոհի ուղեցույց

Բոլոր նյութերը պատրաստ են, թարգմանվել են հայերեն և դրվել ՍՊՀՀ սերվերի վրա: Վերանայեք բոլոր նախնական նյութերն ուշադիր կերպով և պատրաստ եղեք շատ արագ նախնական պարապմունք անցկացնելուն:

Լրիվ պարապմունք` գլխավոր շահագրգիռ կողմերի գնահատման առաջին հանդիպման նյութերը

Համայնքի գլխավոր շահագրգիռ կողմերի մասնակցությամբ այդ առաջին հանդիպումը սահմանում է գնահատման աշխատանքների տեմպը: Շատ մասնակիցների համար դա կարող է լինել առաջին միջոցառումը, որտեղ նրանցից պահանջվում է հանդես գալ որպես թիմի անդամ: Հետևաբար 6-ժամանոց հանդիպումը նախատեսվում է նրանց խմբային գործընթացի մասին տարրական գիտելիքներ տալու և թիմի անդամ լինել սովորեցնելու համար:

Պարապմունքը ներառում է հիմնական կանոնների ուղեցույցը, որպես համայնքային խումբ աշխատելու վարքագծային ստանդարտները, մտային գրոհի ուղեցույցը, փոխզիջման սկզբունքով որոշումների կայացման ուղեցույց, ի լրումն` գնահատման աշխատանքներ և ապագայի տեսլականի մշակում:

Ներկայացումը պարունակում է դասավանդման ծանոթագրություններ այդ պարապմունքի ժամանակ օգտագործվող բոլոր նյութերի համար: Ծանոթացեք բոլոր նյութերին ուշադիր կերպով և պատրաստ եղեք ունենալու հաճելի, լարված հանդիպում:

Գնահատման առաջին պարապմունքի ներկայացումը

Համայնքի գլխավոր շահագրգիռ կողմերի հետ ձեր առաջին հանդիպմամբ սկսվում է համայնքի սոցիալական ծառայությունների լրիվ գնահատումը: Դուք պետք է մասնակիցների հետ կիսեք նախնական գնահատման արդյունքները` ունեցած միջոցներից մինչև կարիքները, որն սկսել էր մշակել թիմի ղեկավար կորիզը, և դիմել մասնակիցներին լրացումների համար: Ներկայացումը ներառում է վարողի համար նախատեսված բոլոր նշումները, որոնցով դուք կարող եք պատրաստվել պարապմունքի համար նախատեսված բոլոր թեմաների շուրջ:

Խոցելի խմբերին տրամադրվող ծառայությունների համայնքային գնահատմանը նվիրված 29 սլայդները տեղացի մասնակիցներին կտանեն թիմի կառուցման ուղիներով, կտան նրանց պատկերացում այն մասին, թե ինչպես են բոլոր մարդիկ մտածում տարբեր կերպով, ինչպես են խմբերը և թիմերը աշխատում, կնկարագրեն գործընթացը, հնարավորություն կտան նրանց կատարել իրենց առաջին գնահատումը, ներառյալ՝ 4 հավանական տեսլականի սահմանումների մշակումը, որոնց հիման վրա հետագայում պետք է մշակվի մեկ ընդհանուրը:

Այդ հանդիպման ժամանակ գնահատման մասնակիցներին պետք է երկու անգամ բաժանել աշխատանքային խմբերի, ինչպես մանրամասն նկարագրված է ներկայացման սլայդներում: Վերանայեք օրակարգը և սլայդները հանդիպման ժամանակն ուշադիր կերպով բաշխելու համար, որպեսզի մասնակիցներն ունենան առաջադրանքի կատարման, ինչպես նաև ամբողջ խմբին արդյունքների մասին զեկուցելուն նախապատրաստվելու համար պահանջվող ժամանակ:

Ուշադիր կարդացեք բոլոր սլայդներն ու ներկայացնողի համար նշումները և պատրաստ եղեք անցկացնելու առաջին հանդիպումը՝ նվիրված համայնքում սոցիալական ծառայությունների վիճակի և համայնքի անդամների կարիքների գնահատմանը, ներառյալ՝ այդ կարիքները բավարարելու համար եղած միջոցները, ուժեղ կողմերը, հնարավորությունները:

Առաջին գնահատման ժամանակ ներկայացնողին անհրաժեշտ նյութեր

Ներկայացնողին/ դասավանդողին՝ լավ կլինի մասնակիցների հետ առաջին հանդիպումից առաջ ծանոթանալ հետևյալ ցանկին և նրանց բացատրել, որ խոցելի խմբերի մասին խոսելիս գործածվում են տարբեր անվանումներ: Հետևյալ արտահայտություններն ամբողջ խմբին կբերեն տերմինաբանության առումով ընդհանուր հայտարարի, որը նրանց անհրաժեշտ կլինի այս և մյուս հանդիպման ժամանակ:

Խոցելի խմբերի տարբեր սահմանումներ

ԵՄ/Եվրոպական Միություն

- հաշմանդամություն ունեցող անձինք
- գաղթականներ / էթնիկական փոքրամասնություններ
- անտուն մարդիկ
- նախկին բանտարկյալներ
- թմրանյութերի և ալկոհոլի խնդիր ունեցող անձինք
- միայնակ տարեցներ
- երեխաներ

Հայաստանում կիրառվող տերմիններ՝

- հաշմանդամ / հաշմանդամություն ունեցող
- միայնակ տարեցներ
- ընտանեկան նպաստի կարիք ունեցող ընտանիքներ
- ներքին տեղահանվածներ/ փախստականներ
- բազմազավակ մեծ ընտանիքներ
- որբեր, ծնողազուրկ երեխաներ
- զոհված ազատամարիկների ընտանիքներ, այրիացած ընտանիքներ

Հայաստանում պիլոտային համայնքների կողմից օգտագործվող անվանումներ

- հաշմանդամներ և հաշմանդամ ծերեր
- ծնողագուրկ երեխաներ
- թոշակառուներ/ ծերեր
- միայնակ մայրեր/երեխաներին միայնակ մեծացնող մայրեր
- բազմազավակ ընտանիքներ
- հրատապ օգնության կարիք ունեցող ընտանիքներ և անձինք
- ընտանեկան նպաստի կարիք ունեցող ընտանիքներ

Համայնքային երկրորդ գնահատում

Ավարտելով համայնքում սոցիալական ծառայությունների գնահատումը

Շահագրգիռ մասնակիցների ամբողջ խմբի հետ երկրորդ հանդիպմամբ ավարտին կհասցվի գնահատման գործընթացը և կսկսվի հավանական ծրագրերի առաջնահերթացումը՝ օգտագործելու համայնքի ուժեղ կողմերն ի պատասխան բացահայտված կարիքների

Համայնքի սոցիալական ծառայությունների գնահատման երկրորդ հանդիպում

1. մեծացնել իրենց դերի՝ որպես տեղացի շահագրգիռ կողմ/թիմի անդամ, ըմբռնումը
2. զարգացնել տվյալների վերլուծության հմտություններ և ունեցած միջոցները կարիքներից կապելու ունակություն
3. մեծացնել պատկերացումը համայնքի սոցիալական ծառայությունների գնահատման առաջավոր փորձի մասին
4. մեծացնել ըմբռնումն ուժային դաշտի մասին և նպաստել դրա կիրառմանը
5. մեծացնել փոխզիջման հիման վրա որոշումների կայացման, սոցիալական պայմանագրերի կնքման, տեսլականին հասնելու, կարիքները բավարարելու և գործողությունների ծրագիր մշակելու համար ծրագրերի առաջնահերթացման մասին ըմբռնումը և կիրառումը,

բավարարման: Շարունակվում է թիմի կառուցման գործընթացը, քանի որ մասնակիցների խմբի որոշ անդամներ հնարավոր է ցանկանան մասնակցել թիմի ղեկավար կորիզի աշխատանքին այդ հանդիպումից հետո առաջնահերթ ծրագրերն իրականացնելու համար:

Փորձնական շրջանի ժամանակ երևաց, որ թիմի անդամները նախընտրում են աշխատել նախաձաշի ժամանակ, քանի որ ամբողջությամբ ներգրավված են գործընթացում և չեն ցանկանում ընդհատել մեկ ժամով: Ուրեմն նախաձաշը կարելի է մատուցել խմբերին նրանց աշխատանքի ընթացքում, որը ձեզանից կպահանջի լրացուցիչ պլանավորում՝ ապահովելու, որ նրանք կարողանան ուտել և աշխատել միաժամանակ:

Ուշադրությամբ աչքի անցկացրեք այդ հանդիպման համար նախատեսված վարժությունները, քանի որ դրանք նախորդ հանդիպման ժամանակ կատարված վերլուծությունները բարձրացնելու են հաջորդ մակարդակին:

Հանդիպումը սկսվելու է տնային հանձնարարությունների մասին հաշվետվություններով, ավարտին է հասցվելու ունեցած միջոցներից մինչև կարիքները գնահատելու աշխատանքը և թիմերի կողմից ներկայացվելու է

համայնքի սոցիալական ծառայությունների տեսլականի սահմանումը, որը հանդիսանում է չորս առանձին խմբերով մշակած սահմանումների հիման վրա մշակած մեկ ընդհանուր սահմանում: Ներկայացման ժամանակ պետք է ձկուն լինել, որովհետև անհրաժեշտ է, որ

բոլոր շահագրգիռ մասնակիցները համաձայնության գան տեսլականի սահմանման շուրջ և միգուցե առաջարկեն որոշ բառերի փոփոխություններ, որոնք պետք է հավանության արժանանան ամբողջ խմբի կողմից:

Օրակարգը նախատեսում է բոլոր վարժությունների կատարման համար անհրաժեշտ ժամանակ, սակայն փորձնական գնահատումները ցույց տվեցին, որ մասնակիցները ցանկանում են ավելի շատ քննարկման ժամանակ և նախընտրում են աշխատանքային նախաձառ: Դա այդպես էր բոլոր չորս համայնքներում, քանի որ նրանց հաճելի էր միմյանց հետ որպես թիմ աշխատելը և ցանկանում էին առավելագույնս օգտագործել այդ ժամանակը:

Ինչպես տեսնում եք այդ հանդիպումն ավարտվում է նրանց երկու կամ երեք գերակա խնդիրների վերջնական առաջնահերթացմամբ, հետևաբար վերջում անհրաժեշտ է լինելու ժամանակ՝ ներգրավելու ղեկավար կորիզի նոր անդամներ, շարունակելու մշակել գործողությունների ծրագրերը և պատրաստ լինելու պատասխանել իրենց ամենակարևոր երկու-երեք ծրագրերի համար առաջարկների ներկայացման հայտի հետ կապված հարցերին: Յուրաքանչյուր ծրագրի համար կարելի է ստեղծել ղեկավար կորիզներ, և նոր առաջնորդները պետք է շարունակեն անհրաժեշտ աշխատանքները նախքան ծրագրի թիմի հաջորդ հանդիպումը: Շահագրգիռ մասնակիցներին ավելի մոտիկից ծանոթանալուց հետո դուք ի վիճակի կլինեք դատելու, թե որքան ժամանակ կպահանջվի խմբին հանդիպման վերջում թիմեր կազմելու համար: Փորձնական շրջանի ժամանակ համայնքների անդամների մեծ մասին հանդիպման վերջում պահանջվում էր 10-15 րոպե հետագայում հիմնական ծրագրի թիմերի կազմում աշխատելու համաձայնություն տալու համար: Մեկ համայնքում պահանջվեց համարյա 30 րոպե՝ քննարկելու, թե ինչպես են որոշ ծրագրեր դուրս գալիս առաջնահերթության ցանկից երկրորդ անգամ քվեարկելուց հետո, և ցանկացան ևս մի քանի րոպե տրամադրել առաջին շրջանի բոլոր ծրագրերի առավելությունները ևս մեկ անգամ քննարկելուն: Ձեր՝ որպես վարողի, ձկունությունը հնարավորություն կտա համայնքին հասնելու փոխզիջման, եթե խմբի մի քանի անդամներ պարզապես պատրաստ չեն, որ որոշ ծրագրեր ներառվեն ապագայում իրականացվելիք ծրագրերի ցանկում: Հիշեցրեք մասնակիցներին իրենց ռեսուրսների մասին և ուժային դաշտի վերլուծության մասին, որը պետք է իրականացվի հանդիպման ժամանակ, քանի որ հաճախ դա է լինում պատճառը, որ ծրագրի իրականացումը երբեմն անհրաժեշտ է լինում հետաձգել:

Վարողին/դասավանդողին անհրաժեշտ պարագաներ

- ❖ Գրելու թուղթ և ամրացնելու ստենդ
- ❖ Գունավոր մարկերներ
- ❖ Պրոյեկտոր և սլայդներ
- ❖ Հանդիպման համար անհրաժեշտ նյութերը՝
 1. օրակարգ
 2. Սլայդներ, յուրաքանչյուր էջում երեքը՝ նշումների համար տեղով
 3. Ներկայացնողի/վարողի համար բոլոր տեսլականների սահմանումների մեկ օրինակ՝ կարդալու համար
 4. Համայնքահեն շարունակական խնամքի վերաբերյալ նյութը
 5. Խոցելի խմբերի մասին նյութը բոլորին բաժանելու համար
 6. Ուժային դաշտի վերլուծության մասին նյութը խմբային աշխատանքի համար
 7. Կարևորագույն գաղափարների առաջնահերթացման թերթիկը բոլորի համար
 8. Ըստ ցանկության՝ Յամայկայի սոցիալական ծառայություններ տրամադրող հասարակական կազմակերպությունների մասին նյութը բոլորի համար

Բոլոր նյութերը և սլայդները թարգմանվել են հայերեն և դրվել ՍՊՀՀ սերվերի վրա՝ պատրաստ ձեր երրորդ՝ շահագրգիռ կողմերի կատարած գնահատման երկրորդ հանդիպման համար: Այդ հանդիպումը նախատեսվում է որպես 6-ժամանոց սեմինար-պարապմունք, ներառյալ՝ նախաձաշը: Այդ դասընթացի մաս են կազմում երեք վարժություն առանձին խմբերով, որոնց արդյունքում ըստ առաջնահերթության կդրվեն համայնքի համար ամենակարևոր ծրագրերը:

Երկրորդ հանդիպման ներկայացում՝ համայնքի կարիքների գնահատում II

Համայնքի սոցիալական ծառայությունների գնահատման II փուլի հանդիպման ներկայացմամբ կավարտվի համայնքի գլխավոր շահագրգիռ կողմերի կողմից համայնքի սոցիալական ծառայությունների գնահատումը, վերլուծությունը և իրենց ամենաառաջնահերթ ծրագրերի ընտրությունը: 36 սլայդները և վարողի համար նախատեսված նշումները ձեզ կտանեն վերջնական գնահատման բոլոր քայլերով մեկ առ մեկ և կօգնեն մասնակիցներին վերլուծել ծրագրերը տվյալ պահին իրենց կարիքները բավարարելու ամենամեծ հավանականություն ունենալու տեսանկյունից:

Հանդիպման համար անհրաժեշտ կլինի պատրաստվել երեք խմբային վարժություններին: Հետևաբար ուշադիր կերպով անհրաժեշտ է հաշվարկել ներկայացումների տեմպը և պատրաստել մասնակիցներին իրենց առաջադրանքի համար:

Յուրաքանչյուր սլայդի հետ ներկայացնողի համար կան մանրամասն նշումներ բոլոր մասերի վերաբերյալ: Ուշադիր կերպով կարդացեք դրանք և պատրաստ եղեք ամբողջ նյութը ներկայացնել ձեր ուրույն ոճով: Հանդիպման ժամանակ ուշադիր կերպով հետևեք տեմպին և ժամանակին՝ ապահովելու հաճելի, բարեհաջող դասընթաց հանդիպման բոլոր խնդիրներն իրագործելու համար:

Այդ հանդիպման ավարտին դուք կընտրեք երկու կամ երեք հավանական ծրագիր, որոնց շուրջ գլխավոր շահագրգիռ կողմերի կամավոր ներկայացուցիչներն իրենց համայնքի համակարգողի հետ կնշակեն առաջարկի ներկայացման հայտ: Հետևաբար հանդիպման վերջում վերջին սլայդների վրա աշխատանքը չպետք է անել հապճեպ և չի կարելի դրանք կրճատել:

Սկսեք տեսլականը մշակող թիմի զեկույցով: Շնորհակալություն հայտնեք թիմին կատարած աշխատանքի համար նախքան սլայդները ներկայացնելը:

Հանդիպման վերջում ժամանակ խնայեք մինչև սեպտեմբեր նրանց կատարելիք աշխատանքին ծանոթացնելու համար: Շեշտեք, որ ամբողջ աշխատանքը կապված է իրենց տեսլականի սահմանման և նպատակների հետ:

Երկրորդ հանդիպման համար օժանդակ նյութեր

2008թ. պիլոտային համայնքների տեսլականների ներկայացում

2008թ. պիլոտային համայնքների՝ Ալավերդի, Արթիկ, Նոր Նորք և Նուբարաշեն, տեսլականները կարելի է ներկայացնել որպես օրինակ՝ ի լրումն աշխարհի տարբեր երկրների օրինակների: Դրանք չպետք է տրամադրվեն մասնակիցներին, քանի որ նրանք պետք է ոչ թե արտագրեն կամ ընդօրինակեն որևէ համայնքի տեսլականը, այլ ստեղծեն իրենց ուրույն տեսլականն իրենց յուրօրինակ համայնքի համար:

Համայնքի կողմից իրականացվող շարունակական խնամք ամբողջ կյանքի ընթացքում

Այս նյութը կարևոր ուսուցողական դաս է բոլոր մասնակիցների համար: Անհրաժեշտ է ուշադիր կերպով ծանոթանալ նյութին, որպեսզի բոլոր շահագրգիռ կողմերին կարողանաք բացատրել համայնքի մակարդակում անհրաժեշտ սոցիալական ծառայությունների հիմունքները:

Նրանք պետք է հասկանան նաև ձևակերպումները, եթե ֆինանսավորման համար ծրագրում են դիմել սոցիալական ծառայություններ ֆինանսավորող կազմակերպություններին: Կարևոր են նաև անվանումները՝ «կանխարգելիչ, բարելավող, վերականգնողական»: Մասնակիցները պետք է պատկերացնեն այն ծառայությունները, որոնք անհրաժեշտ են կյանքի տարբեր փուլերում: Դա նրանց հնարավորություն կտա մտածել իրենց սոցիալական կարիքների մասին և այդ կարիքները բավարարելուն ուղղված ներկա ծառայությունների մասին:

Պատրաստ եղեք այդ աղյուսակը հանդիպման ժամանակ մանրամասն քննարկել մասնակիցների հետ և նրանց խորհուրդ տվեք մեկ անգամ ևս կարդալ նյութն այն ժամանակ, երբ սկսեն ուշադրությունը կենտրոնացնել իրենց ներկա կարիքների, առկա միջոցների և այն բանի վրա, թե ինչպիսի ծրագրեր կցանկանան ընդլայնել՝ բավարարելու իրենց համայնքում ամենախոցելի խմբերի կարիքները:

Խոցելի խմբեր և ծրագրեր

Խոցելի խմբերի և սոցիալական ծառայության ծրագրերի մասին նյութը Հայաստանում ներկայումս գոյություն ունեցող խոցելի խմբերի մասին է, որը ներառում է նրանց կարիքների բավարարմանն ուղղված գործող ծրագրերի օրինակներ: Մենք այդ ցանկը տրամադրում ենք՝ ցուցադրելու համայնքներին, որ առաջավոր փորձի օրինակներ կան նաև Հայաստանում, իրենց համայնքների նման համայնքներում:

Ուժային դաշտի վերլուծության խմբային աշխատանք

Ուժային դաշտի վերլուծությունը կարևոր քայլ է ծրագրերի գնահատման գործում, քանի որ կարող են լինել ծրագրեր, որոնք պատրաստ են իրականացման համար կամ այնպիսիք, որ միգուցե անհրաժեշտ է մի փոքր հետաձգել՝ ըստ օգնող և խանգարող ուժերի: Նորից կարդացեք ձեր բոլոր նյութերը, որպեսզի պատրաստ լինեք խմբին առաջնորդել իրենց ընտրած առաջնարհերը ծրագրերի վերլուծության միջով: Վերլուծության օրինակ բերված է նյութերի մեջ: Երբ խմբերն իրենց գերակա ծրագրերի համար կատարեն ուժային դաշտի վերլուծություն, ապա նրանք կտեսնեն, թե տվյալ պահին, որ ուժերն են օգնում իրենց ծրագրի իրականացմանը և որոնք են խանգարում: Ուժային դաշտի վերլուծության աղյուսակ պետք է կազմվի բոլոր ծրագրերի համար: Ծրագրի անվանումը պետք է գրել աղյուսակի վերևում, իսկ այնուհետև քննարկել օգնող և խանգարող ուժերը: Վարժությունը կատարելուց հետո խմբերի զեկույցները ամբողջ խմբին կօգնեն հասկանալ, թե որ ծրագիրն է այդ պահին իրականացման համար պատրաստ:

Կարևորագույն գաղափարների գնահատում

Ձեր համայնքի խոցելի խմբերի կարիքների բավարարմանն ուղղված առաջնահերթ գաղափարների մասին նյութն օգտագործվում է ուժային դաշտի վերլուծությունից հետո: Դա մի գործիք է, որի օգնությամբ յուրաքանչյուր մարդ կհասկանա, թե որ ծրագրերն են տվյալ պահին պատրաստ իրականացման համար, իսկ որոնք՝ դեռևս ոչ: Բոլոր ծրագրերը պետք է ուղղված լինեն համայնքում խոցելի խմբերի կարիքների բավարարմանը և պատրաստ՝ իրականացվելու հաջորդ տարի: Բոլոր ծրագրերի գնահատումից հետո մասնակիցներն արդեն պատրաստ կլինեն քվեարկել, փակցնելով գունավոր, կաշուն շրջանակներ, իրենց ամենաառաջնահերթ ծրագիրը որոշելու համար: Հետևեք ներկայացման մեջ եղած

հրահանգներին և պատրաստ եղեք այս նյութն օգտագործել որպես գործիք՝ օգնելու համայնքի անդամներին առաջնահերթացնելու իրենց հավանական ծրագրերը:

Այլ նյութեր

Յամայկայի ՀԿ-ները՝ Յամայկայում սոցիալական ծառայություններ մատուցող հասարակական կազմակերպությունների տեսակները ցուցադրող աղյուսակ:

Այդ աղյուսակը գերազանց նյութ է տրամադրելու այն համայնքներին, որոնք նշում են, որ չունեն ՀԿ-ների հետ գործընկերություններ կազմելու ռեսուրսներ կամ իրենց համայնքում չունեն սոցիալական ծառայություններ մատուցող ՀԿ-ներ: Յամայկայում ՀԿ-ների հետ գործընկերություններ սկսեցին հիմնել այն ժամանակ, երբ չունեին բավարար ֆինանսական միջոցներ, ՀԿ-ները բավականաչափ զարգացած չէին և, այդուհանդերձ, շատ ծրագրեր հաջողությամբ իրականացվեցին՝ բավարարելու համայնքում ամենախոցելի խմբերի կարիքները:

Եթե աշխատում եք այնպիսի համայնքում, որտեղ կան զարգացած ՀԿ-ներ կամ ՀԿ-ների զարգացումը կամ նրանց հետ համագործակցությունը խնդիր չի համարվում, ապա հավանաբար այս նյութն անհրաժեշտ չի լինի օգտագործել, քանի որ այդ համայնքում չեն լինի այնպիսի արգելքներ, որոնք ցուցադրվում են աղյուսակի օգնությամբ: Հետևաբար, այս աղյուսակը և դրա նման ուրիշ նյութեր դրված են ինտերնետային կայքում և կարող են օգտագործել այն դեպքում, երբ համայնքի անդամները համարեն, որ ծրագրեր իրականացնելու նպատակով ՀԿ-ների հետ գործընկերություն հաստատելը դժվար է:

Գործընկերության զարգացում, 4-րդ հանդիպում

Ձեր վերջնական դասընթացի ժամանակ թիմի ղեկավար կորիզի ջանքերով և համայնքի կողմից ընտրված ամենակարևոր ծրագր(եր)ի իրականացման համար անհրաժեշտ «գործընկերությամբ» կատեղծվի նոր, հաջող, կայուն ծառայությունների մատուցման հիմքը: Վերջնական դասընթացը կարելի է կազմել այնպես, որ այն լինի ձկուն, գործընկերությանը նախապատրաստի առաջին համատեղ քայլերի համար և ապահովի, որ մշակվի իրատեսական ծրագիր՝ չափելի արդյունքներով:

4-րդ հանդիպման խնդիրները՝ գործընկերության զարգացում

1. Խթանել թիմի կառուցումը համայնքի գործընկերուն թիմի հետ
2. մեծացնել համայնքում գործընկերությամբ աշխատելու մասին գիտելիքները
3. ընդլայնել ծրագրի մշակման համար տրամաբանության մոդելի մասին գիտելիքը և կիրառումը
4. մշակել ցուցանիշներ, ծրագրի առաջին գործողություններն ու արդյունքները
5. մշակել մեկամյա մոնիթորինգի գործընթաց՝ հաջողության հասնելու համար
6. մեծացնել կարողությունները ծրագիրը բարեհաջող կերպով իրականացնելու համար
7. վերանայել առաջարկի ընտրության գործընթացը

Պետական և դոնորների դրամամիջոցները հանդիսանում են համայնքի ծրագրի մի մասը, հետևաբար, նրանք պետք է լինեն լիովին հաշվետու և հասկանան մոնիթորինգի ու գնահատման կարիքը, որպես իրենց գործողությունների ծրագրի մաս:

Հանդիպման ժամանակ ներկայացվում են գործընկերության հիմնական տարրերը՝ նախապատրաստելու նոր թիմին ծրագրի հաջող փուլում իր դերի համար:

Ներկայացվում է նաև տրամաբանության մոդելը, որը հանդիսանում է ծրագիրն իրականացումից մինչև գնահատում մշակելու հաջող գործիք: Մոդելն օգնում է նաև ծրագրի մոնիթորինգին ու գնահատմանը և գործընկերներին

ընձեռում է իրենց հաջողությունը և արժեքը հանրությանը ներկայացնելու հնարավորություն:

Չորս ժամ տևող հանդիպումը հնարավորություն է տալիս ավելի խորացնել նրանց պատկերացումն այն մասին, թե ինչ կբերի նոր գործընկերությունը և տրամադրում է գործիքներ, որոնք կօժանդակեն իրենց ծրագիրը միասին հաջողությամբ մշակելուն: Հանդիպման համար անհրաժեշտ բոլոր նյութերը տրամադրվում են երկու ներկայացման և մասնակիցներին բաժանապելիք նյութերի տեսքով: Հիշեք, որ հանդիպման սկզբում անհրաժեշտ է կատարել թիմի կառուցման վարժություններ:

Վարողին/դասավանդողին անհրաժեշտ պարագաներ

- ❖ Գրելու թուղթ և ամրացնելու ստենդ
- ❖ Գունավոր մարկերներ
- ❖ Պրոյեկտոր և սլայդներ
- ❖ Ներկայացում « Գործընկերության հաստատում համայնքում » և «Տրամաբանության մոդելը»
- ❖ Անհրաժեշտ նյութեր՝
 1. Օրակարգ՝ գործընկերության հաստատում, համայնքի գնահատման վերջին հանդիպումը
 2. Սլայդներ

3. Տրամաբանության մոդելի մասին նյութը
4. Գանտի աղյուսակը և աշխատանքային թերթիկներ
5. Մոնիթորինգի և գնահատման մասին նյութը

Բոլոր նյութերը և ներկայացումները թարգմանվել են հայերեն և դրվել ՍՊՀ սերվերի վրա՝ պատրաստ չորրորդ հանդիպման համար՝ գործընկերության զարգացում: Գնահատման վերջնական հանդիպումը նախատեսված է ավարտել չորս ժամում, ներառյալ՝ նախաձաշը:

Գործընկերություն և տրամաբանության մոդել

Համայնքում գործընկերության զարգացմանը նվիրված հանդիպման համար անհրաժեշտ է ունենալ երկու ներկայացում: Առաջինը՝ «Աշխատել համայնքում գործընկերությամբ», նախատեսված է թիմի անդամների հետ ինտերակտիվ քննարկման համար և կազմված է ութ սլայդից: Դուք պետք է պատրաստ լինեք այդ հանդիպման ընթացքում տրվելիք ցանկացած հավանական հարցերին պատասխանելու համար, շեշտելով այն, որ սոցիալական պայմանագրերի կնքում և համայնքային գործընկերության հաստատում Հայաստանում արդեն տեղի է ունենում:

Շեշտեք, որ առաջարկի ներկայացման հայտը և դրամաշնորհի գործընթացը սոցիալական պայմանագրի ձև է և նրանց համար գերազանց մոդել, որպեսզի սկսեն մտածել, թե գործընկերների միջև ինչ այլ ֆորմալ և ոչ ֆորմալ համաձայնագրեր են ցանկանում մշակել: Ներկայացման մեջ բերվում են ֆորմալ և ոչ ֆորմալ գործընկերությունների օրինակներ, որոնք կարելի է հարստացնել սեփական օրինակներով: Ավելի ֆորմալ պայմանագրերի համար պահանջվում են վերջնաժամկետներ և որոշակի տեղեկատվություն, որը պետք է հաշվետվության ձևով տրամադրվի ամեն տարի: Ոչ ֆորմալ պայմանագրերի օրինակ կարող է լինել այնպիսի մի պարզ բան, ինչպիսին է ամիսը մեկ նախաձաշի հրավերը՝ ծրագրի վերաբերյալ թարմ տեղեկություններ փոխանակելու համար:

Ներկայացումը նախատեսված է՝ աջակցելու գործընկերության հաջողության ձևավորմանը, երբ կողմերը տեղյակ են այն առավելություններին և դժվարություններին, որ միասին պետք է հաղթահարեն:

Երկրորդ ներկայացումը՝ տրամաբանության մոդելը, նրանց կտա ծրագիրը պլանավորելուց մինչև իրականացնելու և հաջողությամբ գնահատելու հմտություններ: Առաջավոր փորձ հանդիսացող այս մոդելը նրանց հնարավորություն կտա ֆինանսավորող կազմակերպություններին հեշտությամբ հաշվետվություն ներկայացնելու ցուցանիշների, ինչպես նաև հաջողությամբ իրականացված քայլերի և արդյունքների մասին: 30 սլայդները նրանց համար ուղեցույց կհանդիսանան մոդելի հաջողությամբ կիրառելու ընթացքում: Նախատեսեք ժամանակ, որն անհրաժեշտ է գործընկերներին մոդելը փորձնական աշխատանքի համար նախատեսված նյութի հետ կիրառելու համար: Ի լրումն՝ պետք է հակիրճ ներկայացնեք Գանտի աղյուսակը դասի վերջում ժամկետների կազմման համար: Հետևաբար, խնայեք գոնե 10 րոպե նրանց հակիրճ ծանոթացնելու և աշխատանքային թերթիկներն օգտագործելու համար:

Ուշադրությամբ կարդացեք ներկայացնողի համար նախատեսված նշումները, որովհետև դրանք պարունակում են այն ամենն, ինչ անհրաժեշտ է մոդելը, որը շատերը բարդ են համարում, հեշտությամբ քայլ առ քայլ սովորեցնելու համար: Հիշեք, որ դուք մասնակիցներին օգնում եք ձեռք բերել հմտություններ, որոնք նրանց հնարավորություն կտան հաջողության հասնել իրենց ամբողջ ծրագրի և գործընկերության ընթացքում:

Չորրորդ հանդիպման համար նախատեսված նյութեր

Տրամաբանության մոդել

Տրամաբանության մոդելի վերաբերյալ նյութերը մասնակիցներին կտան ներկայացման ժամանակ ստացած գիտելիքները կիրառելու համար անհրաժեշտ փորձ: Գործընկերներին խրախուսեք ծանոթանալ աղյուսակներին, այնուհետև մշակել իրենց առաջնահերթ ծրագիրը, ընտրելով մեկն այն նպատակներից, որոնք նրանք հույս ունեն իրագործել, իրենց համայնքում նոր ծառայություններ առաջարկելով: Աշխատեք խմբի հետ, երբ նրանք սկսեն մշակել իրենց ծրագիրը տրամաբանության մոդելը կիրառելով: Ներկայացման մեջ բացատրվում է, թե ինչպես կիրառել մոդելը քայլ առ քայլ, սա պարզապես իրենց նոր գիտելիքն իրենց առաջնահերթ ծրագրում կիրառելու ժամանակն է: ՍԴՀՀ սերվերի վրա դրված տրամաբանության մոդելը նույնպես այնպիսի ձևաչափով է, որ մասնակիցները մոդելի աղյուսակի վրա աշխատելու տեղ ունենան:

Գանտի աղյուսակ

Գանտի աղյուսակը ծրագրի ժամանակացույցը գրաֆիկապես պատկերելու գերազանց գործիք է: Քանի որ այն գրաֆիկական տեսքով ցույց է տալիս խնդիրների հաջորդականությունը, այն կարող է ծրագիրն իրականացնող թիմին օգնել խուսափելու ոչ իրատեսական ժամկետներից և խնդիրներից: Կարևոր է, որ յուրաքանչյուր ծրագիր նախագծվի իրատեսորեն, իսկ Գանտի աղյուսակը մի գործիք է, որը գործընկերներին կօգնի հաջողությամբ իրականացնել ծրագիրը: Մեկ անգամ ևս կարդացեք տրամադրվող բացատրական նյութերը և ներկայացրեք աղյուսակը, երբ մասնակիցներն ավարտեն տրամաբանության իրենց մոդելի մշակումը: Նրանք այնուհետև կարող են սահմանված խնդիրները ներկայացնել ըստ մոդելի:

Ծրագրի վերահսկողական մեխանիզմներ

Ծրագրի վերահսկողությունը կարևոր է ցանկացած ծրագրի իրականացման ժամանակ: Ոչ կառավարական կազմակերպությունների հետ գործընկերության զարգացմանն ու ընդլայնմանը զուգընթաց, նախարարությունը, տեղական ինքնակառավարման մարմինները կամ այլ դոնորները պետք է ծրագրեն մեխանիզմներ վերահսկելու և գնահատելու ծրագրի միջոցառումների ծրագրային և ֆինանսական հաջողությունները: Հստակ վերահսկողական մեխանիզմները կարող են օգնել նախարարությանը/տեղական ինքնակառավարման մարմիններին/դոնորներին, ինչպես նաև հասարակական կազմակերպություններին բարձրորակ սոցիալական ծառայություններ մատուցելու իրենց առաքելությունը կատարելու գործում:

Վերահսկողությունն նշանակում է տվյալների հավաքում, որոնք հնարավորություն կտան նախարարությանը/տեղական ինքնակառավարման մարմիններին/դոնորներին ունենալ ավարտուն տեղեկություններ իրականացվող ծրագրերի մասին: Կարող է այս տեղեկությունները պարբերաբար հավաքել ծրագրված և կազմակերպված ձևով: Վերահսկողության իրականացման ժամանակ հավաքված տեղեկությունների հիման վրա նախարարությանը/տեղական ինքնակառավարման մարմինները/դոնորներն ի վիճակի կլինեն գնահատելու ծրագրերի իրականացումը և այդ տեղեկություններն օգտագործելու իրենց հաշվետվությունների մեջ:


Սովորաբար վերահսկողության գործընթացում ներգրավված են լինում այն ստորաբաժանումը կամ վարչությունը, որի համար ծրագիրն իրականացվում է, և Վերահսկողության և գնահատման վարչությունը: Ծրագրի վերահսկողությունը իրականացվում է հետևյալ բաղկացուցիչներով՝

- վերլուծական կամ ծրագրային հաշվետվություն (գնահատման զեկույց),

- ֆինանսական հաշվետվություն (աուդիտորական զեկույց),
- այց(եր)

Վերահսկողության բաղկացուցիչներն արդյունավետ են համակցության մեջ: Դրամաշնորհային շրջափուլի իրականացման ընթացքում աշխատակազմի կողմից կօգտագործվի ծրագրի վերահսկողության հետևյալ մոդելը՝

Վերահսկողության գործընթացի մոդել



Հաշվետվություններ

Ծրագրի ընթացքի վերահսկողությունն իրականացվում է ծրագիրն իրականացնող կազմակերպության կողմից կանոնավոր, պարբերաբար ներկայացվող վերլուծական հաշվետվությունների միջոցով: Հաշվետվությունը բաղկացած է երկու մասից՝ ծրագրի իրականացման հաշվետվություն և ծրագրի ֆինանսական հաշվետվություն, որոնց միջոցով տրամադրվող տեղեկատվությունը մանրակրկիտ ուսումնասիրվում և ստուգվում է:

Վերլուծական հաշվետվություններ

Յուրաքանչյուր ծրագիր ունի նախապես մշակված ակնկալվող արդյունքների և դրանք գնահատող ցուցանիշների ցանկ, ինչպես նաև ծրագրի իրականացման ժամանակացույց (սովորաբար դրանք առդիր կցվում են հիմնական պայմանագրին): Ծրագրի վերահսկողությունն իրականացվում է համաձայն այդ ժամանակացույցի և ցուցանիշների և ներկայացված հաշվետվությունների: Ծրագրի վերլուծական հաշվետվություններում պետք է մանրակրկիտ նկարագրված լինեն տվյալ ժամանակաշրջանում իրականացված բոլոր գործողությունները և ծախսված գումարները: Հաշվետվության մեջ ծրագրային միջոցառումների և այդ նպատակով ծախսված ֆինանսական ռեսուրսների վերաբերյալ տեղեկատվությունը պետք է ունենա տրամաբանական կապ և համապատասխանություն: Ավելին, հաշվետվությանը պետք է կցված լինեն նաև այն բոլոր փաստաթղթերը, որոնք հավաստում են տվյալ ծրագրային գործունեության իրականացումը (օրինակ դասընթացների իրականացման փաստաթղթերը, կոնսուլտացիաների գրանցման մատյանը, տեսաերիզների օրինակներ և այլն): Ցանկացած փաստաթուղթ կամ նյութ, որը մշակվել է ծրագրի շրջանակներում պետք է ներկայացված լինի վերլուծական հաշվետվության հետ:

Ծրագրային և ֆինանսական հաշվետվությունները պետք է վերահսկվեն և ստուգվեն համապատասխան ծրագրի և մոնիթորինգի պատասխանատու մարմինների կողմից համապատասխան նախորդ սահմանված ժամանակացույցի: Ծրագրային և ֆինանսական հաշվետվությունները պետք է դիտարկվեն միաժամանակ, որպեսզի պարզ լինի թե ինչքանով

են դրանք համապատասխանում: Կարող են մշակվել հաշվետվությունների դիտարկման ձևաթղթեր, որտեղ անձնակազմը նշումներ է կատարում հետագայում ճշգրտման ենթակա դիտարկումների և նկատառումների մասին հաջորդ այցելության ժամանակ կամ հաջորդ հաշվետվությունը ստուգելիս, դրանց նկատմամբ առանձնակի ուշադրություն դարձնելու նպատակով:

Ծրագրի իրականացման հաշվետվությունների դիտարկում

Ծրագրի իրականացման հաշվետվությունները դիտարկելիս հարկ է հատուկ ուշադրություն դարձնել հետևյալ կետերին

- Արդյո՞ք դրամաշնորհառուի/կապալառուի կողմից իրականացրած գործունեությունը համընկնում է ներկայացված ծրագրի նպատակներին;
- Արդյո՞ք բավարար առաջընթաց է տեղի ունեցել ծրագրում նախապես ակնկալվող արդյունքներին հասնելու համար;
- Արդյո՞ք հայտարարված ծախսերը համապատասխանում են նկարագրված ծրագրային հաշվետվության գործողություններին;
- Արդյո՞ք հաշվետվությունները ներկայացվում են պայմանագրում ներկայացված ժամանակացույցին համաձայն;
- Արդյո՞ք համապատասխանում են ծախսերի և հաշվետվության մեջ ներկայացված գործողությունների ժամանակահատվածները;
- Դիտարկել ժամկետի փոփոխության, բյուջեի վերանայման կամ ծրագրային փոփոխությունների առաջարկը:

Ֆինանսական հաշվետվություններ

Ֆինանսական հաշվետվությունը նույնպես կարևոր է ծրագրի իրականացման ընթացքում: Այն ներառում է՝

- Ծրագրի տնօրենի և հաշվապահի կողմից ստորագրված և կնքված ֆինանսական հաշվետվության ձևը;
- Մանրակրկիտ ծախսերի հաշվետվությունը և այդ ծախսերը հաստատող բոլոր ֆինանսական փաստաթղթերը:

Եթե ծրագրային և ֆինանսական հաշվետվություններն ընդունվում են, ապա հաշվետվությունները հաստատվում են և կատարվում է հաջորդ վճարումը: Եթե հաշվետվությունը չի համապատասխանում ակնկալվող արդյունքներին, ապա կարող է պահանջվել լրացուցիչ տեղեկատվություն կամ փաստաթղթեր: Թերի հաշվետվության դեպքում վճարումը կարող է հետաձգվել այնքան ժամանակ, մինչև չներկայացվեն պահանջվող փաստաթղթերը կամ տեղեկատվությունը: Երբ ներկայացված հաշվետվությունը չի արտացոլում ծրագրի առաջադրված խնդիրները և չի ապահովում համապատասխան փաստաթղթերը, ապա ծրագրի գործունեության դադարեցման հարցն է դրվում:

Առաջին հաշվետվության կամ հաջորդաբար ներկայացվող հաշվետվությունների արդյունքների հիման վրա կարող են ճշգրտվել կատարվելիք այցելությունների անհրաժեշտությունն ու ժամանակացույցը, ինչպես նաև հաշվետվությունների ներկայացման պարբերականությունը:

Մոնիթորինգային այց

Այցի նախապատրաստություն

- Ծանոթանալ ծրագրային փաստաթղթերին, հավելվածներին, որոշված ցուցանիշներին և ակնկալվող արդյունքներին;
- Կարդալ նախորդ հաշվետվությունները, գնահատման փաստաթղթերը;
- Պատրաստել հարցադրումները ծրագրային և ֆինանսական գործունեության վերաբերյալ:

Այցի ընթացքում

- Հետևողական լինել նախորդ այցի, աուդիտորական ստուգման և մոնիթորինգի արդյունքներին;
- Սկսել հարցազրույցը ընդհանուր ծրագրի իրականացման նկարագրությունից և անցնել այցի հարցաշարին;
- Եթե նախորդ հաշվետվությունից կան հարցեր, որոնք պահանջում են պարզաբանում, ապա տեղում ծանոթանալ փաստաթղթերի բնօրինակներին:

Այցից հետո

- Պատրաստել այցի հաշվետվություն և կցել ծրագրի փաստաթղթերին;
- Կազմել հիմնական նկատառումների վերաբերյալ առաջարկություններ և ներկայացնել ծրագիրն իրականացնողին: